Ազգ
Azg
9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 163 (4543)
ISSN: 1829-1651

# «Արմենիա» առագաստանավը կհաղթահարի 3 օվկիանոս

«Արմենիա» առագաստանավի անձնակազմը հոկտեմբերի կեսերին կմեկնի Բուենոս Այրես, որտեղից էլ «Արմենիան» կսկսի իր երկրորդ շրջագայությունը: Նավի անձնակազմը բաղկացած է 7 հոգուց: Արշավախմբի ղեկավար **Զորի Բալայանը** «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ 2-րդ շրջագայության ընթացքում առագաստանավն անցնելու է Մագելանի նեղուցը, Հրո հրվանդանը, Չիլին, Զատկի կղզին, Նոր Զելանդիան, Սիդնեյը, Սինգապուրը, Հնդկաստանը, Կարմիր ծովը, Սուեզի ջրանցքը, Միջերկրական ծովը, Իսրայելը, Լիբանանը եւ այլն: Նախնական մոտավոր հաշվարկներով՝ «Արմենիա» առագաստանավի երկրորդ շրջագայությունը տեւելու է 8-10 ամիս: Առաջին անգամ «Արմենիան» կհաղթահարի 3 օվկիանոս:

# Եզակի զգուշացում Ադրբեջանին Եվրոմիության կողմից

«Կարծում եմ, ադրբեջանական ղեկավարությունը գիտակցում է այն հսկայական ռիսկը եւ պոտենցիալ կորուստները, որ կապված են հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու փորձերի հետ», Reuters լրատվական գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին, որը դեռեւս նախօրեին գտնվում էր Բաքվում:



Սեմնեբիի խոսքերով, հակամարտության շփման գծում այս ամռանը տեղի ունեցած զինված ընդհարումներն ամենալուրջն էին վերջին գրեթե երկու տարվա ընթացքում: Եվրոմիության հատուկ ներկայացուցչի կարծիքով, ԵԱՀԿ դիտորդական խումբը, որ բաղկացած է 6 հոգուց, չի կարող ամբողջությամբ կազմակերպել դիտարկումը շփման գծի երկայնքով, ուստի հնարավոր տարբերակ է դիտորդների կազմի ընդլայնումը եւ ավելի մեծ թվով դիտորդների տեղակայումը: Սեմնեբիի ներկայացմամբ, ներկայիս դիտորդական առաքելության հնարավորությունները բավականին սահմանափակ են ինչպես դիտարկում իրականացնելու, այնպես էլ միջադեպերի հետաքննություն անցկացնելու առումով:

«Շփման գծի երկայնքով մենք ունենք անորոշ իրավիճակ, քանի որ սա ինքնակարգավորվող հրադադար է, երբ երկու կողմերը գտնվում են դեմ առ դեմ՝ առանց որեւէ բաժանարար ուժի», իր մտահոգությունը պարզաբանել է Սեմնեբին, ընդգծելով, որ շփման գծի երկու կողմերում տեղակայված են մեծ քանակությամբ զինվորներ, որոնց նյարդերը կարող են տեղի տալ: Իսկ այդ պարագայում իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից, ուստի պետք է լրջագույնս մոտենալ այս հարցին:

Եվրոմիության հատուկ ներկայացուցիչը զգուշացրել է, որ Լեռնային Ղարաբաղի շուրջը բախումների ուժգնացումը կարող է անվերահսկելի դարձնել դրանք: Նրա կարծիքով, երկու կողմերն էլ գիտակցում են բախումների ուժգնացման ռիսկը եւ կորուստները:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

# ԼՂՀ ճանաչման տարբերակը իշխանության զինանոցում է եւ կկիրառվի հարմար պահին

Երեկ, անդրադառնալով ԼՂՀ հարցին, Ազգային ժողովի ՀՀԿ-ական պատգամավոր **Գագիկ Մինասյանը** հարցի լուծումը մոտիկ չի համարել, քանի որ այն սկզբունքները, որոնց հիման վրա բանակցություններ են գնում, հեռու են Ադրբեջանի մոտեցումներից: Ադրբեջանական դիվերսիոն գործողություններին Մինսկի խմբի համանախագահների՝ հայտարարությամբ տրված արձագանքը Գ. Մինասյանը համարժեք չի համարել, այլ՝ անտրամաբանական եւ ադրբեջանական ջրաղացին ջուր լցնող: Այդ արձագանքի անհասցե լինելն, ըստ Գ. Մինասյանի, այն պատճառով է, որ ադրբեջանական կողմի բազմաթիվ խնդիրներին եթե կոշտ արձագանքի խնդիրն էլ ավելանա, ապա չի բացառվում, որ Ադրբեջանը բանակցություններից դուրս գա: Իսկ ԼՂՀ ճանաչման տարբերակը իշխանության զինանոցում առկա է, ուղղակի դրա համար ամենահարմար պահը պետք է ընտրվի:

# Ադրբեջանցի աշակերտը սպանել է հայ աշակերտի

Ծննդյանդ Բաքվից զոհված, Մոսկվայի N 501 դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Էդուարդ Մարկարյանը Ռուսաստանի քաղաքացի էր: News.am-ի տեղեկացմամբ, Մոսկվայի ոստիկանությունը հայտնում է, որ կռիվ հրահրողը եղել է Ռուսաստանի քաղաքացի, 9-րդդասարանցի ադրբեջանցի մի աշակերտ:

Համաձայն իրավապահ մարմինների կռիվը տեղի էր ունեցել դպրոցից ոչ շատ հեռու: 11-րդդասարանցու հետ կռվել է 9-րդ դասարանի մի աշակերտ: Վեճը վերածվել է ձեռնամարտի: Կռվի ժամանակ 9-րդ դասարանցին ուժեղ հրել է իր հակառակորդին: Վերջինս ընկել է եւ գլուխը հարվածել ծառին: Ստացած վնասվածքներից հայ աշակերտը տեղում մահացել է:

Մահացած անչափահասի դին տեղափոխել են դատաբժշկական փորձաքննության, որը պետք է պարզի մահվան պատճառը:

Ա. Հ.

# Սեպտեմբերի 6-ին լրացավ Ստամբուլում պետականորեն կազմակերպված ջարդերի 55-րդ տարելիցը

*Թուրքական քաղաքացիական հասարակության կազմակերպությունները խոր անտարբերությամբ շրջանցեցին այս տխուր փաստը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Սեպտեմբերի 6-7-ին լրացավ 1955-ին Ստամբուլում կազմակերպված ջարդերի տարելիցը: Թեեւ այդ ջարդերը պաշտոնապես հույների դեմ էին կազմակերպվել, սակայն դրանք իրականացնելու համար Թուրքիայի ասիական հատվածի գյուղերում, քաղաքներում հավաքագրված ընչաքաղց թուրք խառնամբոխը պետության ընձեռած հնարավորությունը առավելագույնս օգտագործելու մղումով չխնայեց նաեւ հայերին ու հրեաներին:

Այսինքն, 1955-ի սեպտեմբերի 6-7-ին Կ. Պոլսո հույների դեմ կազմակերպված ջարդերից հավասարապես տուժեցին պոլսահայերն ու Ստամբուլի հրեաները: Այս փաստը մեկ անգամ եւս ցույց տվեց, որ իթթիհադականների իրավահաջորդ քեմալականները, որոնց շարքերում վխտում էին հայ ազգի դահիճները, ոչ միայն հետամուտ են եղել շարունակելու երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը հայերի հանդեպ, այլեւ «հայկական» հարցը հայերին իսպառ բնաջնջելու միջոցով լուծելու սկզբունքով են կարգավորել ազգային փոքրամասնությունների հետ պետության հարաբերությունները Քեմալ Աթաթուրքի հիմնադրած ժամանակակից Թուրքիայում:

Տես էջ 3

# Հայաստանի ԱԳ նախարարը կմեկնի Իրան

Առաջիկա տասն օրվա ընթացքում Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը այցելելու է Իրան: Fars News Agency-ին այս մասին հայտնել է Իրանում Հայաստանի դեսպան **Գրիգոր Առաքելյանը**:

Էդվարդ Նալբանդյանը հանդիպելու է Իրանի պաշտոնյաների հետ՝ քննարկելու երկկողմ հարաբերությունները, ինչպես նաեւ տարածաշրջանային ու միջազգային հարցեր:

Գրիգոր Առաքելյանը հայտնել է, որ այցը կատարվում է իրանական կողմի հրավերով, հավելելով, որ այցի ընթացքում քննարկվելու են երկկողմ հարաբերություններն ընդլայնելու ու զարգացնելու հեռանկարները: Ըստ Առաքելյանի՝ առաջիկայում եւս Հայաստանից բարձր մակարդակի այցելություններ են սպասվում Իրան:

Ա. Հ.

# Մեր մետրոյում էլ են միջադեպեր լինում




Երեկ Երեւանի մետրոյի «Բաղրամյան» կայարանում առավոտյան ժամը 10:30-ից մինչեւ ժամը 13-ը որոշ ժամանակ կայանում չէր իրականացվում՝ կայարանի լուսավորության էլեկտրական վահանակում կարճ միացման հետեւանքով առաջացած հրդեհի եւ ծխի պատճառով: Նույնիսկ կայարանի աշխատակիցներին տարհանել էին: 6 հրշեջ մեքենա տեղայնացրել են հրդեհի աղբյուրը: Պաշտոնական տեղեկատվությունն ավելի ուշ երեկ հայտնեց, թե ժամը 10:35-ին ոստիկանության՝ Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության հերթապահ մասում ահազանգ է հնչել, որ Բաղրամյան կայարանում հրդեհ է: Ասվում էր, որ ահազանգով դեպքի վայր են մեկնել ոստիկանության ծառայողներ, արտակարգ իրավիճակների նախարարության հրդեհաշիջման շտաբը եւ 6 հրշեջ մեքենա: Փակվել է կայարանի ելումուտը, անջատվել է էլեկտրական սնուցումն, ու դադարեցվել է կայարանի աշխատանքը:

Պարզվել է, որ կայարանի լուսավորության սնուցման վահանակում, մալուխների կարճ միացման հետեւանքով, ծուխ է առաջացել եւ տարածվել: Իրավիճակը կարգավորվել է կեսօրից մի փոքր անց, եւ բնականոն ռիթմով կայարանը սկսել է աշխատել ժամը 13-ից:

Տեղի ունեցածը զգուշացնում է՝ մետրոյի տեխնիկական վերազինմանը կառավարության ուշադրությունը հրավիրելու:

Մ. Խ.

# Համանախագահները ոտքով անցել են շփման գիծը՝ Ադրբեջանից Արցախ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցելության շրջանակներում երեկ Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ), Իգոր Պոպովը (Ռուսաստան) եւ Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա) ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ սեպտեմբերի 7-ին Բաքվում ունեցած հանդիպումներից հետո ուղղաթիռով ուղեւորվել են շփման գծին մոտ գտնվող Բարդա քաղաք:

Ադրբեջանական լրատվամիջոցները տեղեկացնում են, թե Բարդա ժամանած համանախագահները հանդիպումներ են ունեցել շրջանի տեղական իշխանությունների հետ, ծանոթացել են իրավիճակին:

Տեղում էլ, ըստ հաղորդագրությունների, ճշգրտվել է համանախագահների անցնելիք հետագա ուղին, որտեղից անցնելով ղարաբաղա-ադրբեջանական շփման գոտին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացուցիչները դիտարկում անցկացնեն ու ապա ուղեւորվեն Ստեփանակերտ: Այստեղ նախատեսված են հանդիպումներ Լեռնային Ղարաբաղի նախագահի եւ արտգործնախարարի հետ, որից հետո այսօր, ըստ նախնական հայտարարության, համանախագահներն արդեն կլինեն Երեւանում:

Երեկ, ԼՂՀ իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը հերթական դիտարկումն է անցկացրել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում՝ Մարտակերտ-Թարթառ ճանապարհին: Դիտարկումն անցել է ըստ սահմանված գրաֆիկի: Դիտարկման ժամանակ զինադադարի ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել: Ինչպես եւ ծրագրված էր, դիտարկման ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի հետ հատել են շփման գիծը:

Շփման գիծը հատելու ընթացքում անցկացված մոնիտորինգը հերթական անգամ ոչ մի պատահար չի գրանցել այն դեպքում, երբ կրակոցներից ու զինված ընդհարումներից վերջին տասն օրվա ընթացքում անգամ զոհեր են եղել:

Հետաքրքրական է, որ ադրբեջանական «Ազերիպրես» գործակալությունը, հղում անելով իր «ղարաբաղյան թղթակցին», տարածել է, թե ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեի խոսքերով, որեւէ հայտարարություն կամ մեկնաբանություն այցելության ընթացքում չի լինի, այլ միայն ավարտին համանախագահները հանդես կգան հայտարարությամբ: Անեն դեպքում, նույն աղբյուրի ներկայացմամբ, Ֆասիեն հայտարարել է, թե համանախագահները Ստեփանակերտից չէ, որ ժամանելու են Երեւան, այլ իբր նախ վերադառնալու են Բաքու, ապա նոր միայն՝ Երեւան:

Ադրբեջանական լրատվամիջոցների մեկ այլ տեղեկությամբ՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկն էլ հավաստիացրել է, թե Երեւանում կբարձրացնի Ադրբեջանի երկու զինծառայողների դիակների վերադարձի հարցը, որոնք դիվերսիոն գործողությունների հետեւանքով մնացել են հայկական կողմում:

Այս բոլոր տեղաշարժերին զուգահեռ ադրբեջանական կողմը շարունակում է խախտել զինադադարի ռեժիմը: Մասնավորապես, սեպտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը նախորդ գիշերվա եւ ցերեկվա համեմատ նվազել են, սակայն խախտումներ տեղի են ունեցել ավելի քան 25 անգամ: Գնդակոծվել են Հադրութի, Ասկերանի եւ Մարտակերտի շրջանների ուղղություններում տեղակայված ղարաբաղյան դիրքապահների հենակետերը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Շաբաթ օրը այլեւս աշխատանքային չի կարող լինել

*Բացառությունը, բացի հանրակրթական դպրոցներից, կարելի է տարածել նաեւ արտադպրոցական հաստատությունների վրա*

Այս տարվա օգոստոսին ուժի մեջ մտան Աշխատանքային օրենսգրքում Ազգային ժողովի կատարած փոփոխությունները: Դրանց մանրամասներին անդրադառնալու առիթ դեռ կունենանք: Այս հրապարակմամբ կցանկանայինք անդրադառնալ միայն կազմակերպությունների եւ աշխատակիցների հանգստյան օրերին առնչվող փոփոխություններին:

Հարկ է նշել, որ կատարվել են նշանակալի փոփոխություններ հօգուտ աշխատողների: Մասնավորապես ամրագրվել է, որ աշխատանքի առավելագույն տեւողությունը պետք է լինի օրական 12, իսկ շաբաթական՝ 48 ժամ, ուժը կորցրած ճանաչելով այն դեպքերը, երբ գործատուի եւ աշխատողի համաձայնությամբ արտաժամյա աշխատանքը կարող է հասնել մինչեւ 72 ժամի:

Մեկ այլ փոփոխությամբ էլ բոլոր կազմակերպությունների համար սահմանվել է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 2 հանգստյան օրով, բացառությամբ հանրակրթական ոլորտի, որի աշխատողների համար կարող է սահմանվել վեցօրյա աշխատանքային շաբաթ մեկ հանգստյան օրով, եթե աշխատանքները հնարավոր չէ կազմակերպել հնգօրյա աշխատանքային շաբաթով: Այս փոփոխությունը որոշակի տարակարծություններ է առաջացրել:

Գործատուները, բնականաբար, ոգեւորված չեն նման փոփոխությունից, քանի որ դա նրանց հնարավորություն չի տալիս շաբաթ օրը աշխատանքի կանչելու աշխատողներին: Աշխատողներն էլ թերեւս գոհ են, որ հանգստյան երկու օր են ունենալու: Սակայն ամեն ինչ միանշանակ չէ, քանի որ հաճախ լինում են դեպքեր, երբ կազմակերպություններում որոշ աշխատանքային կիսատ մնացած գործեր արվում են շաբաթ օրը՝ մասնակի կամ լրիվ զբաղվածությամբ: Օրենքի փոփոխությամբ դա արդեն հնարավոր չի լինի, իսկ աշխատանքի պետական տեսչությունն էլ առիթը բաց չի թողնի ընկերություններին տուգանելու:

Ինչպես արդեն նշեցինք, շաբաթ օրը կարող է աշխատանքային լինել միայն դպրոցների համար: Սակայն այստեղ խոսքը միայն հանրակրթական դպրոցների մասին է: Նույնը չի վերաբերում երաժշտական, արվեստի, սպորտային դպրոցներին: Վերջիններս նույնպես չեն կարող աշխատել շաբաթ օրերին: Մինչդեռ, միանշանակ է, որ գոնե այստեղ նման հնարավորություն պետք է ընձեռել: Հիմնականում հնգօրյա հանրակրթական դպրոցի աշակերտներից շատերը իրենց նախասիրությամբ հաճախում են նաեւ այս դպրոցները, եւ եթե շաբաթվա մյուս օրերին հոգնածությունը մեծ է, ապա շաբաթ օրը արտադպրոցական պարապմունքներից մեկը լինելու համար լավագույն օրն է: Քանի որ դա հնարավոր չէ, ապա երեխաների մի մասը հրաժարվում է այցելել այդ պարապմունքներին: Եվ արվեստի, երաժշտական, սպորտային դպրոցները կորցնում են իրենց աշակերտներին: Կասկած չկա, որ դա չի բխում ոչ երեխաների, ոչ այդ դպրոցների դասավանդողների, ոչ էլ ընդհանրապես մեր հասարակության շահերից: Ուստի կարելի է օրենքում կատարել եւս մեկ փոփոխություն եւ շաբաթօրյա աշխատանք թույլատրել նաեւ նման դպրոցների համար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Ավանդական հարսանիքը», քաղքենիությունը եւ «կարմիր խնձորը»

*Ժամանակն է դրանցից հրաժարվելու*



Այսօր հայկական հարսանիքները վերածվել են խեղկատակության եւ քաղքենիության բարձրագույն մակարդակի ցուցադրության: Ներկայիս հարսանիքներում միահյուսված են հայկական հնագույն ավանդույթներն ու եվրոպական ժամանակակից մոտեցումներն ու պատկերացումները, եւ ստացվում է մի խառնուրդ, որից հնության եւ կեղծավորության հոտ է փչում:

Հայկական հարսանիքը սկսվում եւ ավարտվում է ականջ սղոցող տաշիներով. մոտեցումն էլ հետեւյալն է. ով ավելի բարձր է գոռում «Տաշիիիիիի, աման, աման-աման, վաաաաաայ, տաաաաաաշ», նշանակում է որ նա շատ ուրախ է եւ շատ է սիրում նորապսակներին: Նրանք, ովքեր «տաշի» գոռալու տաղանդով օժտված չեն, հարսանիքից հետո այնպայման արժանանում են նորապսակների դժգոհությանը: Հետո սկսվում է հարսին հագցնելու պահը: Երբ քավորկինը բացում է զամբյուղն ու ցուցադրաբար ներկայացնում՝ սա մեր հարսի օծանելիքը՝ ֆրանսիական, սա պայուսակը, կոշիկը... Հետո սկսվում է միքանիժամյա ճամփորդություն՝ նորապսակների տուն, եկեղեցի, այգի, զագս եւ եզրափակվում ռեստորանում:

Չկա առավել ցնցող պատկեր, քան երեկոյի ընթացքում խորոված պարեցնելու տեսարանը, ու որպեսզի քավորը չխայտառակվի, կլորիկ մի գումար է տալիս, որպեսզի խորոված պարեցնողը ափսեն դնի հարսի եւ փեսայի սեղանին: Ցնցումը շարունակվում է, երբ նվերներն են հանձնում: Հանդիսավարը նման բովանդակությամբ տեքստ է կարդում: «Արուս հորաքույրը, նրա ամուսին Լյուդվիգն ու չորս զավակները շնորհավորում են եւ նվիրում ոսկյա մատանի բռլյանտե քարերով»: Հետո գալիս են հարսի պարի հատվածն ու շաբաշի պահը: Թե ներկայացվածներից որո՞նք են հայկական՝ դժվար է ասել: Այդ հարցի պատասխանը դժվարանում է տալ նաեւ ազգագրագետ **Ռաֆայել Նահապետյանը**: Նա փաստում է՝ հստուկենս ավանդույթներ են պահպանվել: Նախկինում հարսանեկան արարողությունը տեւում էր 7 օր: Հինգշաբթի օրը հաց ու գաթա էին թխում, ուրբաթ օրը անասուն մորթում, իսկ շաբաթ եւ կիրակի՝ ուրախանում:

Ազգագրագետը պատմում է, որ նվագախումբը բարձրանում էր տղայի տան տանիք եւ նվագով ազդարարում հարսանիքի լուրը: Նահապետյանը նշում է, որ այդ ավանդույթներն այսօր էլ պետք է պահպանվեն: Թեպետ շատ դժվար է պատկերացնել, թե ինչպես է նվագախումբը որեւէ բարձրահարկի գլխին հարսանեկան պարեղանակ նվագելու:

Հարսանեկան արարողության ժամանակ սկեսուր մայրիկի՝ նորապսակներին մեղրով հյուրասիրելը խորհրդանշում է քաղցրություն: Ափսե կոտրելով էլ սպանում են չար ոգուն:

«Ափսեն այլ նշանակություն էլ ունի: Ափսեն բերում են հոր տնից եւ կոտրում տղայի տան շեմքին, որպեսզի աղջկա հայացքը հոր տանից կտրվի: Նորապսակների ուսերին լավաշ դնելը խորհրդանշում է հացի լիությունը», պատմում է ազգագրագետը:

Նա փաստում է, որ այսօր քավորի դերն ու գործառույթները փոխվել են, եւ նրա ներկայությունն ընդամենը սիմվոլիկա է:

«Նախկինում քավորն էր կապում հարսի գոտին: Նա գոտին պետք է հարսի գլխի վրայով պտտեցներ ու հատակին զգեր, իսկ նորահարսը բարձրացներ: Այս գործողությունը պետք է կատարվի 7 անգամ, այնուհետեւ քավորը հարսի մեջքին է ամրացնում գոտին, ինչը արգասաբերության նշան է»:

Ազգագրագետը պատմում է, որ հայի ինքնության պահպանման համար պետք է ավանդույթները պահպանվեն ու գնահատվեն: Նա խնդրում է զուգահեռներ չանցկացնել իր մտածելակերպի եւ ազգանվան մեջ, եւ հավելում է, որ հարսանիքից հետո «կարմիր խնձորի ավանդույթը» նույնպես պետք է պահպանվի:

«Կարմիր խնձորի արարողությունը վայրենություն չէ, դա հայկական ավանդույթ է, որը պետք է շարունակական լինի, եւ հայի ինքնության պահպանման գրավականն է: Սա հայերին շատ սազական ավանդույթ է, այն արտացոլում է հայ կնոջ ամոթխածությունը, ընտանեկան դաստիարակությունը», ասում է ազգագրագետը, եւ ավելի կամաց տոնով հավելում. «Թեպետ այժմ բժշկական միջամտությամբ հնարավոր է կուսությունը վերականգնել»: Թե այդ դեպքում ի՞նչ կարիք կա ներկայացում խաղալու՝ ազգագրագետը լռում է: Նա վստահ է՝ կարմիր խնձորի արարողությունը ընտանեկան ճշմարիտ կյանքի սկիզբն է: Թե որքանով է այդ փաստը երջանկացնելու նորապսակներին՝ ազգագրագետը կրկին պատասխան չունի:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՂԱՐԱԲԱՂ**

# «Մարաղա՝ 20-րդ դարի Գողգոթան»



**Այսօր, ժամը 13-ին «Մետրոպոլ» հյուրանոցում կներկայացվի նոր նախագիծ՝ «Մարաղա՝ 20-րդ դարի Գողգոթան» խորագրով: Ծրագրի հեղինակը «Այլատյացության կանխարգելման նախաձեռնություն» կազմակերպությունն է, որը նաեւ տեղեկացնելու է նոր կայքի մեկնարկման մասին: Լեռնային Ղարաբաղի ամենամեծ բնակավայր Մարաղա 1992 թվականի ապրիլի 10-ին ներխուժեցին ադրբեջանական օմոնականները, որոնք աննկարագրելի դաժանություններ իրականացրին գյուղում: Մարդկանց հանդեպ վարվեցին որպես իսկական բարբարոսներ՝ սպանելով, կողոպտելով, գերի վերցնելով Մարաղայի բնակիչներին, որոնցից շատերն իրենց կյանքը փրկեցին անտառներում ապաստանելով: Նախագիծն իրականացնողները ցանկանում են ներկայացնել Մարաղայում պատահածի ողջ իրական պատկերը:**

# Օտարալեզու դպրոցների փաթեթն ԱԺ օրակարգ կմտնի միայն լսումներից հետո





**Երեկ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի (եւ այլն) հանձնաժողովի նիստում որոշվել է 15 օրով հետաձգել օտարալեզու դպրոցների բացման օրենսդրական փաթեթի ընդգրկումն արտահերթ նստաշրջանի առաջին քառօրյայի օրակարգ: Այդ առաջարկի սկզբնաղբյուրը ԿԳ նախարար Արմեն Աշոտյանն է, որն այդպիսի առաջարկը հիմնավորվում է այն պատրվակով, որ մինչեւ փաթեթի երկրորդ ընթերցում հարկ է անցկացնել խորհրդարանական լսումներ, ինչպես եւ նախատեսվել էր առաջին ընթերցմամբ փաթեթի ընդունման ժամանակ:**

**Մ. Խ.**

## Միջազգային եվրոպական շարժման պատվիրակությունը խորհրդարանում

**Երեկ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հյուրը Միջազգային եվրոպական շարժման պատվիրակությունն էր՝ շարժման փոխնախագահ, Բելգիայի պետնախարար Ֆերդինանդ Նոթոմը եւ գլխավոր քարտուղար Ժոան Դիոգո Պինտոն: ԱԺ նախագահը բարձր գնահատեց շարժման գործունեությունը՝ ընդգծելով, որ կարեւորում է Հայաստանի ինտեգրումը եվրոպական ընտանիքին, եւ այդ ուղղությամբ քայլեր են կատարվում: Ֆ. Նոթոմն էլ ասել է, թե Հայաստանի եվրոպական շարժումն ամենադինամիկն է Եվրոպայի այս հատվածում, եւ հասկապես ողջունել 2011 թվականի նոյեմբերին Միջազգային եվրոպական շարժման համաժողովի անցկացումը Հայաստանում, այդ առումով ակնկալելով Հայաստանի խորհրդարանի աջակցությունը: Այդ համաժողովը նվիրված է լինելու Արեւելյան գործընկերության անդամ երկրների եվրոինտեգրմանը: Ազգային ժողովի նախագահն աջակցություն խոստացավ այդ համաժողովին: ԱԺ լրատվական ծառայության հաղորդմամբ՝ անդրադարձ է եղել նաեւ ԼՂՀ հակամարտությանն ու հայ-թուրքական հարաբերություններին:**

**Մ. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հոկտեմբերի 29-31-ը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա «Ձեր թվային ապագան» խորագրով DigiTec Expo 2010 միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսը: Կազմակերպիչը Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունն է: «2005 թվականին, երբ սկսում էինք DigiTec-ը, մեր հիմնական նպատակն էր Հայաստանում ունենալ տարածաշրջանային ամենախոշոր տեխնոլոգիական ցուցահանդեսը: 2010-ի պլատինե հովանավորը «Վիվասել-ՄՏՍ» ընկերությունն է: «Յուրաքանչյուր ոլորտ, եթե ուզում է զարգանալ, պետք է հիմնվի տեխնոլոգիայի վրա, իսկ տեխնոլոգիան էլ պետք է ընդգրկի ամենանորարար լուծումներն ու գաղափարները: DigiTec Expo-ն առիթ է տալիս ընկերություններին ու կազմակերպություններին՝ ցուցադրելու իրենց նվաճումներն ու հաջողությունները: Երբ ոլորտը զինված լինի նորարար տեխնոլոգիաներով, արդեն կկարողանա լինել մրցունակ ու առաջատար», ասուլիսի ժամանակ ասաց «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

# DigiTec Expo-ն արդեն հայտնի է ամբողջ տարածաշրջանում

Ինչ-որ իմաստով անցյալ տարի դա արդեն հաջողվեց», երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում ասաց Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն **Կարեն Վարդանյանը**:




Ներկայումս ցուցահանդեսի տարածքների 72 տոկոսն արդեն զբաղեցված է: Մասնակցության հայտ են ներկայացրել 30 ընկերություններ, որոնք են «Նեյշնլ Ինսթրումենթսը» «Այքան Քոմունիքեյշնսը», «Ինստիգեյթը», «Նորք տեղեկատվավերլուծական կենտրոնը», «Սինոփսիս Արմենիան» եւ այլն: Ակնկալվում է, որ ցուցահանդեսին կմասնակցեն 60 ընկերություններ, իսկ այցելուների թիվը կհասնի 15 հազարի: Անցյալ տարի DigiTec Expo-ն ունեցել է 12 հազար այցելու: Ցուցահանդեսի հիմնական նպատակներից մեկը այցելուների թիվն ավելացնելն է: «Նաեւ ուզում ենք՝ այս տարի ցուցահանդեսն առավել շեշտադրի նորաստեղծ ձեռներեցությունը՝ տեխնոլոգիական ու նորարարական», նշեց Կարեն Վարդանյանը: 6-րդ ամենամյա DigiTec Expo-ի շրջանակներում անցկացվելու է DigiTec Start Up forum, որի ժամանակ նորաստեղծ ընկերությունները ներկայացնելու են իրենց ծառայություններն ու գործունեությունը:

Նորից անդրադառնալով այցելուների թվին՝ Կարեն Վարդանյանը տեղեկացրեց, որ այցելուների 20 տոկոսը կազմում են այլ ոլորտների ղեկավարները, որոնք ցուցահանդեսում լուծումներ են փնտրում իրենց բիզնեսի համար, շուրջ 50 տոկոսը կազմում են ուսանողները, իսկ 30 տոկոսը՝ մասնագետները: Այս թվերի մեջ, իհարկե, չեն մտնում պատահական այցելուները: DigiTec Expo տերնեյշնլ ՊՏԸ ԼՏԴ» ընկերությունն է: Արմեն Շահնազարյանը՝ «Դ-Լինկ Ինտերնեյշնլ ՊՏԸ ԼՏԴ»-ի հայաստանյան ներկայացուցչության տնօրենը, նշեց. «Ովքեր հովանավորել են առաջին ու երկրորդ ցուցահանդեսները, ավելի մեծ ռիսկի են գնացել, քան մենք, որ հովանավորում ենք արդեն կայացած մի միջոցառում, որը հայտնի է ամբողջ տարածաշրջանում»:

DigiTec Expo-ն միտված է նաեւ միջազգային կապերի ընդլայնմանը: Ցուցահանդեսի միջոցով ընկերությունները կարող են ծանոթանալ մեկը մյուսի արտադրանքին, այսինքն՝ DigiTec-ը ընկերություններին համագործակցելու շատ լավ հնարավորություն է ընձեռում:

DigiTec Expo 2010-ի շրջանակներում անցկացվելու են նաեւ հարակից միջոցառումներ: Լինելու են, օրինակ՝ DigiLife սեմինարների շարք, Հայաստանի ռոբոտների բաց առաջնություն՝ «Արմռոբոտիքս», էլեկտրոնային կառավարում-ֆորում եւ այլն:

Բարձր տեխնոլոգիաների ընկերությունների, գործարար սպառողների եւ հասարակության միջեւ հաղորդակցման բարենպաստ միջավայր ստեղծելը ցուցահանդեսի կարեւոր նպատակներց մեկն է: Հայաստանյան ՏՀՏ դաշտին ծանոթանալու եւ ուսումնասիրելու համար DigiTec Expo-ն հրաշալի հնարավորություն է:

Այս տարվա ցուցահանդեսի գլխավոր հովանավորը «Դ-Լինկ Ին-

DigiTec Expo 2010-ում կահավորված տաղավարի յուրաքանչյուր քմ-ն արժե 45 հազար դրամ: Այս գումարի մեջ են մտնում նաեւ կահավորանքի ու հարակից ծառայությունների (անվտանգության, մաքրության) ծախսերը: 2005 թվականից DigiTec ցուցահանդեսն անցկացվում է ՀՀ վարչապետի հովանու ներքո, սակայն կառավարության աջակցությունն այս տարի 1\3-ով նվազել է: Կարեն Վարդանյանը տեղեկացրեց, որ կառավարությունն այս տարի DigiTec-ի անցկացման համար տրամադրել է 10 միլիոն դրամ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Վրաց ԱԳՆ-ում նախարարը չգիտի, թե ինչ է ասում փոխնախարարը

Հաճախ Ռուսաստանի կամ այդ երկրին առնչվող ինչ-որ հարցի առնչությամբ ասում են, թե խելքով դա չես հասկանա: Վրաստանի պարագայում Ռուսաստանի հետ առանձնակի նմանություններ դժվար է գտնել, հատկապես որ հարեւան երկրում նախընտրում են հիմնականում մերժողաբար մոտենալ բոլոր այն երեւույթներին ու իրադարձություններին, որոնք այսպես թե այնպես առնչվում են Ռուսաստանին:

Սակայն պարզվում է, Վրաստանի պարագայում էլ կարող են լինել իրավիճակներ, երբ խելքն ու ուղեղը բնավ էլ չեն օգնի գտնելու արվածի կամ ասվածի տրամաբանությունը, հատկապես երբ խոսքը Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու մասին է: Վրաստանի վերջին հայտարարությունները Ռուսաստանի ռազմակայանի Հայաստանում տեղակայման ժամկետի երկարաձգման առնչությամբ անհասկանալի տրամաբանությամբ առաջնորդվող են ներկայացնում նաեւ Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեին:

Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, Վաշաձեն իբր հայտարարել է, թե այդ ռազմակայանի տեղակայման ժամկետի երկարաձգումը սպառնում է Հայաստանի անկախությանը: Առաջին անգամ չէ, որ Վրաստանից Հայաստանի, եւ ոչ միայն Հայաստանի հասցեին ոչ կոռեկտ հայտարարություններ են արվում, սակայն տվյալ դեպքում առավել հետաքրքրական է, որ վրաց արտգործնախարարությունում փոխնախարարն ու նախարարը միմյանցից տեղյակ չեն, թե ինչ հայտարարություններ են արել նույն հարցի առնչությամբ:

Հիշեցնենք, որ «**Ազգը**» տեղեկացրել էր, որ ռազմակայանի տեղակայման ժամկետի երկարաձգման արձանագրության ստորագրմանը հաջորդած հայտարարության մեջ վրաց փոխարտգործնախարար Քալանթաձեն հայտարարել էր, թե այդ հարցը Հայաստանի գործն է, եւ նման արձանագրության ստորագրումը Վրաստանը չի դիտարկում որպես սպառնալիք:

Դժվար թե ինչ-որ բան փոխված լինի վրաց արտաքին գերատեսչության մոտեցումներում, պարզապես, ինչպես շատ այլ դեպքերում, այս անգամ էլ վրացիներն առաջնորդվել են այդ պահին ինչ համար է հայտարարելու մոտեցմամբ: Ամեն դեպքում, Վաշաձեի այս հայտարարության առնչությամբ իր մեկնաբանություններն է ներկայացրել նաեւ Հայաստանի ԱԳ նախարարությունը: Մասնավորապես, ըստ Հայաստանի ԱԳՆ մամուլի խոսնակ **Տիգրան Բալայանի**, Հայաստանի ԱԳՆ-ն չի կիսում Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեի կարծիքը, ըստ որի, Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի կայանման ժամկետի ավելացումը սպառնում է Հայաստանի անկախությանը:

«Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի ներկայության մասին մեր դիրքորոշումը բազմիցս արտահայտել է երկրի ղեկավարությունը: Կարծում ենք, որ ադրբեջանական լրատվամիջոցների կողմից ներկայացված այդ տեղեկատվությունը, սովորության համաձայն, աղավաղում է պարունակում», ասել է Բալայանը: Նրա խոսքերով, որեւէ այլ երկրի պաշտոնյա իրավասու չէ խառնվելու Հայաստանի գործերին, եւ մեկնաբանություններ անելու Հայաստանի անվտանգության հարցերի վերաբերյալ:

Ա. Հ.

ՑԵՂԱՍՊԱՆ

# Սեպտեմբերի 6-ին լրացավ Ստամբուլում պետականորեն կազմակերպված ջարդերի 55-րդ տարելիցը

*1-ին էջից*

**Հիշեցնենք, որ մինչ սեպտեմբերի 6-7-ին ազգային փոքրամասնությունների դեմ կազմակերպված ջարդերը, թուրքական պետական իշխանությունները տարբերաբար՝ 1929-30, 1934 եւ 1938-39 թթ. ունեզրկման միջոցով գյուղական վայրերից վտարել էին հրաշքով հայրենի գյուղում բնակությունը շարունակած հայության հասուկենտ բեկորներին, որ հեռանան երկրից: Իսկ 1934-ին ավելի քան 10 հազար հրեաներ կոտորածի եւ կողոպուտի պատճառով Թրակիայի քաղաքներից սարսափահար փախել էին Ստամբուլ: Դրան էր հետեւել 1942-ի հայ, հույն եւ հրեա հարկատուի կարողությունները մինչեւ 200 տոկոսով գերազանցող «ունեցվածքի» հարկը:**

**Եթե այս հարկով Թուրքիայի ազգային փոքրամասնությունները զրկվում էին գոյության միջոցներից, ապա սեպտեմբերի 6-7-ի ջարդերն էլ նրանց զրկեցին կյանքի անվտանգության երաշխիքներից:**

**Խնդիրը, սակայն, ժամանակակից Թուրքիայում հետեւողականորեն կիրառվող հալածանքները չեն միայն, ոչ էլ այդ հալածանքների ջարդերով եւ կողոպուտով ուղեկցումը, այլ թուրքական ժողովրդական զանգվածների սիրահոժար մասնակցությունն ու կողոպուտի հետ նաեւ ջարդերի հետեւողականորեն արդարացումը թուրքական իրականության մեջ եւ արդարացման հարցում պետություն-ժողովուրդ անքակտելի համերաշխությունը:**

**Ի դեպ, թուրքական ժողովրդական նողկալի զանգվածները սիրահոժար մասնակցել եւ արդարացրել են Հայոց ցեղասպանությունն ու ցեղասպանության ուրացման հարցում նույնպես թուրք ժողովուրդը համերաշխ է եղել Օսմանյան կայսրության իրավաժառանգորդ Թուրքիայի Հանրապետության իշխանությունների հետ: Այս համերաշխությունն ունի խորքային արմատներ, ուստի եւ անխափան շարունակվում է:**

**Համերաշխության հիմքում թուրքական ժողովրդական զանգվածների Հայոց ցեղասպանությանն ու ազգային փոքրամասնությունների ջարդերին սիրահոժար մասնակցությամբ պայմանավորված հանցագործի հոգեբանությունն է: Եթե այդ մասնակցությունը նախադրյալներ է ստեղծել, որ բռնությունը դառնա թուրք հասարակության պաշտամունքի առարկան, ապա հանցագործության գիտակցումն էլ հանգեցրել է հայերի, հույների, հրեաների հանդեպ կատարված չարագործության արդարացման:**

**Երբ բռնության պաշտամունքը համադրվում է չարագործության արդարացման հետ, ապա զոհերի նկատմամբ ատելությունը համատարած բնույթ է ստանում տվյալ հասարակությունում եւ հասարակության անդամները, փոխանակ զղջալու, մարդասպանի հոգեբանությամբ կարողանում են կատարվածով հպարտանալ: Քանի որ թուրքական հասարակության մեջ մարդասպանի հոգեբանությունը ընդհանուր է, ուստի չարագործությամբ հպարտանալը նույնպես ընդհանուր է դառնում ինչպես տականքի, այնպես էլ վերնախավի համար:**

**Այս ամենի առումով հասկանալի է 1955-ի սեպտեմբերի 6-7-ի ջարդերի մասին բանակի պաշտոնաթող գեներալ Սաբրի Յիրմիբեշօղլուի հայտարարությունը, որը հարցազրույցի տեսքով 9-15-ը հուլիսի 1991-ին հրապարակվել է «Թեմպո» հանդեսի 24-րդ համարում: Ի դեպ, հարցազրույցում գեներալը խոստովանել է, որ ջարդերը կազմակերպել է թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի հատուկ նշանակության գործողությունների վարչությունը, որը 1955-ին ինքն էր գլխավորում:**

**Ահա թե կազմակերպչի կարգավիճակով ինչ է ասել մարդասպան տականքից ոչնչով չտարբերվող այս թուրք գեներալը. «Իհարկե, սեպտեմբերի 6-7-ի իրադարձությունները նույնպես գլխավոր շտաբի հատուկ նշանակության գործողությունների վարչության գործն էին, եւ հրաշալի գործողություն: Նպատակին էլ հասավ...»: Մինչդեռ այս գործողության մեջ ներգրավված է եղել թուրք կանանց եւ տղամարդկանց ավելի քան 200-հազարանոց ոհմակը, որի ընթացքում, ըստ թուրքական պետության տվյալների, հարձակման են ենթարկել հույների եւ ազգային մյուս փոքրամասնությունների 4214 բնակարան, 1004 գործատեղի, 73 եկեղեցի, մեկ սինագոգ, երկու վանք, 26 դպրոց եւ ընդհանուր առմամբ 5317 օբյեկտ՝ գործարաններով, հյուրանոցներով եւ բարերով հանդերձ:**

**Բացի ազգային փոքրամասնությունների բնակարաններից, եկեղեցիներից, դպրոցներից, գործատեղերից, մարդասպանների այս ոհմակը կողոպտել է նաեւ հիվանդանոցները, ավերել գերեզմանոցները, իսկ գերեզմանները քանդել է: Այդ ընթացքում ոհմակների ձեռքով սպանվել է 16 հույն, 32-ը դարձել է անդամալույծ, կոտորածներն ուղեկցվել են բռնաբարություններով: Թեեւ Ստամբուլում ԱՄՆ-ի հյուպատոսարանի զեկուցագիրը նշել է բռնաբարված 50 հույն կանանց մասին, սակայն հունական աղբյուրների համաձայն, նրանց թիվը գերազանցել է 200-ը: Միաժամանակ թուրք տականքը հենց եկեղեցում խոշտանգել է հույն քահանաներին, որոնցից մեկին նաեւ թլպատել է սովորական դանակով:**

**1955-ի սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում սպանված հույների, կողոպտված բնակարանների, եկեղեցիների եւ դպրոցների իսկական թիվը չգիտենք: Սակայն դրանք, որպես կանոն, պաշտոնական տվյալներով, կրճատվում են: Պարզապես հայտնի է, որ Ստամբուլում թուրք տականքի ավերած գործատեղերից 54 տոկոսը միայն պատկանել է հույներին, մնացած 17-ը՝ հայերին, իսկ 12-ը հրեաներին: Այդ ընթացքում հարձակման թիրախ են դարձել նաեւ կրոնափոխների բնակարանները:**

**Թվում էր, թե Եվրամիությանն անդամակցելու ջանքեր գործադրող Թուրքիայում ժողովրդական շրջանակներն ու առաջադեմ հասարակայնությունը գոնե 55-րդ տարելիցին հակազդեցությամբ կարձագանքի սեպտեմբերի 6-7-ի ջարդերին, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կդատապարտեն կատարվածը: Ժողովրդական շրջանակները նախընտրում են պահպանել լռություն: Ինչ վերաբերում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ապա սրանք էլ, լինելով խիստ զբաղված հայ-թուրքական հաշտեցմամբ, դատապարտելու ժամանակ չեն գտնում:**

**Այսպիսով, տարելիցը «Սեպտեմբերի 6-7-ը կողոպուտ է, թալան, բռնաբարություն, ավերվածություն եւ լինչ», «Վերջ շովինիզմին եւ կողոպտելու մոլուցքին» կարգախոսներով նշում է միայն Մարդու իրավունքների պաշտպանության միության Ստամբուլի մասնաճյուղը եւ կազմակերպում «Թաքսիմ» հրապարակում ավարտված երթ: Սա նշանակում է, որ թուրք հասարակությունը մասնակցի կարգավիճակով ջարդերի արդարացման հարցում շարունակում է համերաշխությունը պետական իշխանությունների հետ: Ըստ երեւույթին, հանցագործի հոգեբանությունից բխող այս համերաշխությունն էլ պետք է համարվի այլադավանների նկատմամբ թուրքական բազմադարյան հանդուրժողականության դրսեւորումը, որի առանձնահատկությունը հայերի, հույների եւ հրեաների նկատմամբ համատարած ատելությունն է:**

# Հայկական վուվուզելա

Հիշեցնեմ. վուվուզելան աֆրիկյան այն նվագարանն է, որ աշխարհի ֆուտբոլի գավաթի մրցումների ժամանակ ինքնամոռաց ու մոլեգնած փչում էին հազարավոր, տասնյակ, հարյուրհազարավոր աֆրիկացիներ՝ արտահայտելով իրենց հպարտությունը եւ ուրախությունը: Լավ, հասկանալի է, իրենք ուրախ էին ու հպարտ, որ իրենց երկրում առաջին անգամ էին տեղի ունենում համաշխարհային մակարդակի նման մրցումներ, բայց ախր, դա միայն իրենց համար չէր, ամբողջ աշխարհն էր դիտում, եւ միլիոնավոր ֆուտբոլասերներ պարտավոր չէին օրեր շարունակ լսել այդ զարհուրելի վնգոցը, մարզադաշտերի տրոփը, աղմուկը, խաղերի թափն ու ձայները չեզոքացնող, ֆուտբոլային խաղերին բնորոշ ժխորը խախտած այդ զարհուրանքը, մի խոսքով՝ «վուվուզելային» այդ դիվական խրախճանքը... Լավ է դեռ, ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան արգելել տվեց դրանց օգտագործումը, թե ոչ, ամենայն աֆրիկյանի սիրահար Եվրոպան եւ Ամերիկան, չի բացառվում, կփոխառնեին դա, եւ անտանելի վայնասունը կդառնար համամոլորակային...

Հայաստանն էլ իր վուվուզելաներն ունի: Զահլատարագույններից գլխավորը գովազդն է, հատկապես եւ առանձնապես հեռուստատեսայինը: Եվ ոչ ոք չգիտե, թե էլ քանի՜ տարի պիտի լսենք «Էլիս-պրոֆի», «Սեմուր էնդ կո»-ի, «Վալան-պրոֆի», «Արորի» եւ բազում այլ չտեսնված-չլսված բաների մասին... եւ ի՜նչ հաճախականությամբ: Մի՞թե չկա իրազեկ եւ բանիմաց մեկը, որ գովազդատուներին գիտենալ տա, որ հաճախակի կրկնություններից գովազդը վերածվում է հակագովազդի: Մեղքս ի՞նչ թաքցնեմ. ինձ թվում է, որ ոչ մի գովազդատու էլ չկա, հեռուստաալիքները պարզապես կրկնում են, իրենց ռենոմեն (՞) պահպանելու համար, իբր տեսեք, մեզ էլ են գովազդ տալիս:

Այլեւայլ վուվազելաներ որքան կամենաք: Ասենք, աստղերն ու աստղիկները: Երկնակամարում այդքան աստղեր ու աստղիկներ չկան, որքան մեր փոքրատարածք հանրապետությունում: Եվ հաճախ, իսկապես շնորհալի մի երիտասարդի կամ մանկան հանդիպելիս (էկրանի վրա), տարակուսում ես. հո աստղ չէ՞, կամ ինչո՞ւ աստղիկ չէ:

Նաեւ՝ ածականների եւ բնորոշումների գերադրական աստիճանները: Հանճարեղից ցածրը համարյա թե անպատվություն է դարձել: Հանգստացեք, տնավերներ: Հանճարեղը Կոմիտասն է, Խաչատրյանը, Միքելանջելոն, Բախը, Բեթհովենը, եւս մի քանիսը: Այլեւս վականսիա չկա: Կամ՝ ամենատաղանդավորներից մեկը: Ամոթ չլինի հարցնելը, իսկ ամենատաղանդավորները քանի՞սն են...

Նաեւ՝ ամենայն հայկականի գերադասումը, առանձնացումը, ընդգծումը: Հայրենասիրություն չէ դա ամենեւին. մանրածախ առեւտրի աստիճանին մի իջեցրեք նվիրականը: Պատճառաբանությունը, թե եթե մենք չփառաբանենք մեր երեւելիներին, ուրիշը չի լինի, առավել քան նվաստ է: Սակայն Թուրքմենիայի որեւէ մարզախմբի դեմ տարած հաղթանակը մի վերածեք համարյա համազգային արժեքին համազոր բնույթի:

Նաեւ՝ նույն թեմայի շարունակական ծամծմումը. ձեռքի տակ նյութ չկա՞... Ո՞վ ասաց, հապա Սեւանա լճի հիմնախնդի՞րը, հապա արցախյան հակամարտությո՞ւնը, հապա հին ձեռնարկության փուչիկազարդ նորաբացումը, հապա հայ-թուրքական սահմանի բացումը... հապա...

Եվ այսպես շարունակ: Խոսել, գրել, մեկնաբանել այնքա՜ն եւ «վուվուզելային» այնպիսի՜ հնարներով, որ ամենաթանկ եւ մեծարժեք ըմբռնումը վերածվում է ձանձրույթի (եթե չասենք՝ նողկանքի):

Ո՞րն է ելքը: Միջազգային օլիմպիական կոմիտեի հանգույն արգելել վուվուզելան (նմանօրինակ երեւույթները): Սա ամենադյուրինն է: Ամենաբարդը՝ յուրաքանչյուրի մտածողության մեջ այդ (եւ նման) նվագարանների գոյության նշույլն իսկ բացառելը: Ես չգիտեմ, թե ինչ ուժ պիտի ստիպի կեսգիշերային կովբոյ-մոտոցիկլիստին կամ ավտովարորդին, որ կեսգիշերն անց իր շարժիչի ամբողջ հզորությունը գործ չդնի քնած, հիվանդ ու տկար մարդկանց պատուհանների տակ, կամ՝ իր տոնախմբությունը (ծննդյան տարեդարձ, կնունք, ավելի շատ՝ հարսանիք) նշանավորող, ի լուր ամենեցուն ազդարարելու նպատակով հրավառություն չսարքի հրթիռների տրաքտրաքոցով, երբ թվում է, թե երրորդ համաշխարհայինն արդեն սկսվել է:

Հայաստանը, մասնավորապես Երեւանը, աֆրիկյան մարզադաշտ մի սարքեք, մեծարգո պարոնայք: Առանց այդ էլ շատ բալաս է կուտակվել-կիտվել մեր նուրբ, զգայուն եւ դյուրախոց մայր-քաղաքում, անիմաստ եւ անհարկի բեռ մի դրեք մեր ուսերին, առանց այդ էլ շա՜տ է ծանր անելիքը, մարդ եղեք: Եվ ոչ թե վուվուզե-լա...

ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Փնտրվում են գրախանութներ եւ կինոթատրոններ

Մայիս ամսից սկսած Երեւանում մեկնարկում է փառատոնային կյանքն ու եզրափակվում նոյեմբերին: Երկարաշունչ վերնագրերով մշակութային այդ տարատեսակ փառատոների մի մասն ընդամենը լավ գումար վաստակելու միջոց են եւ հիմնականում չեն նպաստում երկրում մշակութային կյանքի զարգացմանը: Փառատոների միջոցով մշակութային քաղաքականություն իրականացնելու մոտեցումներն են սխալ: Փառատոնային այս քաղաքականությունն արդյունավետ չէ, որովհետեւ դրա կայացման ու զարգացման համար նպաստավոր հիմքեր չկան:

Որ հանրապետությունում անցկացվում է «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը կամ «Ռե Անիմանիա» անիմացիոն փառատոնը՝ շատ կարեւոր է եւ արժանի է դրվատանքի, սակայն մինչ նման փառատոների մեկնարկը անհրաժեշտ էր մտաբերել, թե քաղաքում քանի՞ կինոթատրոն կա: Անօրինականության, թողտվության հետեւանքով մայրաքաղաքի կինոթատրոնները դարձան զվարճանքի վայրեր ու տոնավաճառներ:

Երեւանի Հալաբյան 18 հասցեում գտնվող նախկին «Արագած» կինոթատրոնի շենքը նախ վերածվեց բոուլինգ-կենտրոնի: Հետո սեփականատերը հասկացավ, որ հանրությանը ոչ կինո է հարկավոր, ոչ էլ սպորտ, ու կարճ ժամանակ անց կինոթատրոնի տեղում բացվեց առաջավոր եւ ժամանակակից պահանջներին համապատասխանող ավտոսրահ:

Այսօր միայն միջին սերնդի մարդիկ են հիշում, որ Տիգրան Մեծի փողոցում գործել է «Ռոսիա» կինոթատրոնը: Ասում են՝ կինոթատրոնի փոքր սրահներում «ցուրտ ու մութ տարիներին» ցուցադրվում էին էրոտիկ ֆիլմեր, ընդ որում՝ անչափահասների մուտքը դահլիճ չէր վերահսկվում: Բայց դա էլ չօգնեց. կինոթատրոնը սեփականաշնորհվեց եւ դարձավ տոնավաճառ: Էրոտիկ ֆիլմերը չօգնեցին նաեւ «Երեւան» կինոթատրոնի պահպանմանը: Այժմ շենքի մի հատվածում դեղատուն է, մյուս հատվածում հագուստ են վաճառում:

Երեւանում այս պահի դրությամբ գործում է 1,5 կինոթատրոն՝ «Մոսկվան» եւ կիսով չափ գործող «Նաիրին», որի մի հսկայական հատվածը օտարվեց եւ վերածվեց խանութի: Մինչդեռ տարիներ առաջ երեւանցիները կթվեին բազմաթիվ կինոթատրոնների անուններ՝ «Արագած», «Երեւան», «Հայրենիք», «Անի», «Կոմիտաս», «Հրազդան», «Զվարթնոց»: Այժմ նրանցից որեւէ մեկը չկա:

Դաժան ճակատագրի արժանացան նաեւ մայրաքաղաքի գրախանութները: Ժամանակին Աբովյան փողոցում գտնվում քաղաքի ամենամեծ գրախանութներից մեկը: Տարօրինակ ու անհասկանալի պայմաններում եւ բոլորի աչքի առաջ գրախանութի դարակների վրայից գրքերն անհայտացան ու հայտնվեցին կոշիկներ՝ խանութն էլ կոչվեց Roberto: Ներկայիս Sil Plaza-ի փոխարեն՝ Հանրապետության հրապարակի հարեւանությամբ, գործում էր քաղաքի մեծությամբ երկրորդ գրախանութը, որտեղ վաճառվում էին նաեւ դասագրքեր, քարտեզներ ու գրենական պիտույք, իսկ Թումանյան փողոցի գրախանութը նախ դարձավ խաղատուն, իսկ ավելի ուշ վերածվեց SAS սուպերմարկետի: Մեկ միլիոն բնակչություն ունեցող մայրաքաղաքում այսօր գեղարվեստական լավագույն գրքերը կարելի է գտնել հրաշքով պահպանված մեկ-երկու գրախանութներում եւ գետնանցումներում: Վերջինում գրքերը թափված են իրար վրա: Այս պատկերից հետո զրոյական նշանակություն ունի, որ Հայաստանը մասնակցում է գրքի միջազգային փառատոների: Այդ փառատոներին մասնակցելու փոխարեն ավելի նպատակահարմար չէ՞ր լինի քաղաքում մի քանի գրախանութ կառուցել, գրադարան վերանորոգել:

Գրքի խնդիրներից խոսելով կարիք կա նաեւ ուշադրություն դարձնելու, թե պետպատվերի շրջանակներում ինչ գրքեր են հրատարակվում: Եթե արդի հայ գրողների 90 տոկոսին մուսան լքել է, ու գործերն էլ կարդալու բան չեն, ապա ինչո՞ւ են գումար ծախսում եւ տպագրում: Մանավանդ որ դրանք գրախանութներում չեն վաճառվում: Դրա փոխարեն կարելի է տպել հայ, ռուս, արտասահմանյան եւ սփյուռքահայ գրականություն, թարգմանել ժամանակակից արտասահմանյան գրականության լավագույն նմուշները, հայ գրականության լավագույն ստեղծագործությունները թարգմանել օտար լեզուներով: Դա ավելի մեծ օգուտ կբերի հասարակությանը, քան տարեկան տպել մի քանի տասնյակ նոր գիրք, որոնց գոյության մասին վաղը, բացի հեղինակից, ոչ ոք չի հիշելու:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

# Երեւանյան մանրապատումներ

## Մանկության ծառի կերպարով

Ծառերը չեն մեռնում մեր քաղաքում միայն այն պատճառով, որ նրանք ինչ-որ մեկի բիզնեսին խանգարում են, նրանք նախ՝ մեր տներում կրակ (ջերմություն) դառնալու համար զոհվեցին, հետո էլ մարդը կրակ դարձավ իրենց գլխին: Հիմա մեր քաղաքում քանի սրճարան, կրպակ ու գարաժ է բուսել նրանց տեղը, ո՞վ գիտի: Միայն տեսնում ենք, որ այս քաղաքում օդը օր օրի ավելի հեղձուցիչ է դառնում՝ վերեւից էլ կրակ է թափվում գլուխներիս: Ու դա նաեւ այդպես է, որովհետեւ մի մաս երեխան էլ արդեն նույն անհոգի վայրենին է: Երեխան շատ ուշադիր հետեւում է, թե շուրջն ինչ է կատարվում. հոգեբանները երեւի կբացատրեն, թե ինչու նա իր միջավայրի վատն է հատկապես ընդօրինակում:

«Մարտիկ դյադյան թողել ա»՝ լկտի հանդգնությամբ, սղոցը ձեռքին 10-12 տարեկան տղան բարբարոսի նախատիպն է մեջն ասես կրում: Առանց վարանելու, ի՜նչ փութաջանությամբ է վրա ընկել ծառին, ու ճյուղերը մեկ-մեկ տնքոցով տապալվում են գետնին: «Մարտիկ դյադյան թողել ա», կրկնում է: «Ո՞վ է Մարտիկ դյադյան»: «Էս ծառի տերն ա», շարունակում է նույն տոնով: «Ինքն ա էս ծառը տնկել, հիմա իրեն խանգարում ա»: Մի քանի գարաժների արանքում խեղդվող ծառը լուռ տնքում է՝ կանաչ-դեղին սիրուն ծաղկաբույլերը գետնին շաղ տված: Կողքին խոշոր, ժանգոտ մետաղաղբամանները՝ օրնիբուն լեփ-լեցուն ապականում են օդը: Անտեղի է ծառի շուրջը աղմուկով խմբված այս երեխաներին բացատրելը թե ծառն ինչ օգտակարություն ունի՝ հենց իրենց: «Նկարի, չեմ վախենում, անունս էլ Դավիթ է»: «Իսկ որ ծառ կտրելու համար տուգանք է հասնում»: «Զանգում ես՝ զանգի, քաղաքապետարանում էլ ծանոթ ունեմ»՝ նույն հանդուգն լկտիությունը եւ որերորդ անցորդ-բնակչի հանդեպ, ովքեր փորձում էին սաստել: (Ոնց որ «Զարի վերջը» կարդալիս լինեմ):



Սղոցված ծառաբոյն ճյուղերը՝ քիչ անց ուղղահայաց դիրքով, բականման տարածքի անկյունային հատվածը ծածկեցին իրենցով. պատսպարան-կացարան դարձան, որտեղից քիչ անց արդեն «տնավորված» տղաների ծղրտոց-աղմուկն է լսվում, իրար հերթ չտալով, մեկը մյուս վրա ձայն բարձրացնելով, գոռգոռալով թուղթ են խաղում:

Այսպես, «մարտիկդյադյաները» բազմանում են մեր շուրջը, ու իր հետեւորդները, հաստատ իրեն գերազանցելու են, ու չզարմանանք, որ հենց դրանցից մեկն ու մեկը մի օր բազմի թաղապետի կամ քաղաքապետի աթոռին: Ու մանկության այս հուշը (դաստիարակությունը), հաստատ, ուղեկցելու է իրեն, գուցե եւ՝ գործելակերպի հիմնական լեյտմոտիվ որպես:

## Մետրոյի՝ Հանրապետության հրապարակի կանգառում

Երբեւէ չեմ հիշում՝ որեւէ աշխատավայրում տեխնիկական մի աշխատող աշխատանքային ժամերին մաքրություն անի: Դա նրանք անում են ուշ երեկոյան կամ առավոտ կանուխ, եւ սա ընդունված կարգ է, կարծում եմ, ամենուր: Բայց մետրոպոլիտենում այս բանը կարծես չի հարգվում: Ուղեւորների ոտքերի արանքով երեկոյան ուշ ժամերին հատակի մաքրիչ փայտը անպայման պիտի անցնի ու դառնա: Ժամը 22-ից հետո, համենայն դեպս, մաքրող կանայք սկսում են իրենց գործը՝ սոսկալի գլխացավ պատճառող, տհաճ, սուր հոտ արձակող սալյարկայոտված փալասը դես ու դեն տանելով: Մարդիկ սովորել ու չեն նկատում: Բայց անցած ուրբաթ տեխնիկական աշխատողն ինքն իրեն գերազանցեց: Երկար փայտին մի հսկայական փալաս գցած գնում-գալիս էր, մեկ էլ քիչ մնաց նստարանին նստածներին հարվածեր, վրա քշեց՝ թե ոտքերդ բարձրացրեք», ու նստածներն էլ անակնկալի եկած հրահանգչի տոնից, հլու- հնազանդ՝ ոտքերը խմբով մեկ վեր տնկեցին:

Արհամարհա՞նք. տնավարի մոտեցո՞ւմ, թե՞ զզվելի կենցաղի դրսեւորում՝ հասարակական վայրում: Պարզապես տգիտություն:

## Վերելակում

Լավ էր, հա՞, երբ կիսաջարդ դռներով, մաշված-վտանգված վերելակն էր մեզ տանում-բերում: Թաղապետական ընտրությո՞ւնն էր պատճառը, թե՞ ոչ, կարեւոր չէ, վերելակը մի օր կարգի բերվեց, նորոգվեց, պատշաճ տեսքի եկավ: Բայց որքան տեւեց. մի օր հատակի ծածկն է դանակով պատառոտված, մի ուրիշ օր լամպը ջարդված-փշրված, հաջորդ օրը դռները չեն բացվում, մյուս օրը պատերն են կրծոտված: Իսկ վերջերս մտնել չի լինում... հոտի պատճառով: Ճարահատ բնակիչները վերելակի պատին գրություն են փակցրել, թե՝ «հաստագլուխ, վերելակը արտաքնոցից չես տարբերում...»՝ հետն էլ հայհոյանքոտ սպառնալիք ու նաեւ նախազգուշացում՝ թե շարունակվելու դեպքում, վերելակը կանջատվի: Սովորական երեւո՞ւյթ է սա գետնուղիների, շենքի մուտքերի համար, իսկ վերելակների՞: Պատկերացնենք մեզ, մեր դաստիարակությունը, վերաբերմունքը ծառի, վերելակի եւ այլնի նկատմամբ՝ քաղաքակիրթ մարդու հայացքով: Ինչի է վերածվում այս ամբոխը՝ ոնց որ՝ մետրոյի հավաքարարի փայտին նետած փալաս...

## Սրճարանում

Այսպիսին է նաեւ Երեւանը եւ այսպիսին՝ այսպես կոչված երեւանցիները (հին երեւանցիները վիրավորվում են, չեն ընդունում նորեկներին): Բայց արտաքնոցը վերելակից չտարբերողների կողքին կա նաեւ էլիտար հասարակություն, կան մշակված, նույնիսկ ծաղկաշատ վայրեր, ուր աշխատողները, հաստատ, պոլի փայտով ոտքիդ չեն խփում: Շատ վայելուչ ու բարեկիրթ էլ սպասարկում են: Սրանք էլիտար վայրերն են քաղաքի՝ սրճարաններ, ռեստորաններ եւ զվարճանքի այլ տեղեր:

Ամառվա շարունակվող շոգն այս տարի կրակ ու պատիժ է. երեւանցիները հրոք դժվար են դիմանում եւ ծովափնյա քաղաքների բնակիչների պես սկսեցին հագնվել՝ թեկուզ կիսավարտիքներ: Բայց դժվար էր գլխի ընկնել, որ Երեւանում կան սրճարաններ, այն էլ բացօթյա, որտեղ մտնելու հատուկ նորմեր կան, այդ թվում նաեւ հագուկապի: Զարմանալի է, քանի որ առանձնահատուկ վայրի կամ հատուկ հանդիսության մասին չէ խոսքը, այլ բացօթյա սրճարանի, թեկուզեւ՝ «Ջազվեի»: Բայց արի ու տես՝ հյուրերից մեկի կիսավարտիքի պատճառով երիտասարդ այցելուների խմբի մուտքն այս սրճարան չարտոնվեց. մոսկվաբնակ հյուրը զարմացած էր մնացել՝ ա՜յ քեզ կարգ ու կանոն, ա՜յ քեզ մայրաքաղաք: Այդ էր մնացել ուրիշ մայրաքաղաքների հավասարվեք, ուր մարդիկ գոնե այս հարցում ազատ են

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Իսկ ի՞նչ են մտածում իրանցիները

Համաշխարհային քաղաքական լրատվամթնոլորտը հագեցած է կանխատեսումներով՝ կհարվածե՞ն ԱՄՆ-ը եւ Իսրայելը (կամ վերջինս՝ ինքնուրույն) Իրանին, ի՞նչ հետեւանքների կհանգեցնի նման քայլը, ինչպե՞ս կարձագանքեն դրան մյուս գերտերությունները, ի՞նչ կտան զանազան պատժամիջոցները եւ այլն: Առաջադրվում են իրադարձությունների զարգացման տարբեր սցենարներ, որոնցում Իրանի հետ բախման հորձանուտ է ներքաշվում մուսուլմանական աշխարհը, ու առաջին հերթին՝ Լիբանանը, Սիրիան, Սաուդյան Արաբիան...

Սակայն համաշխարհային թե ռուսաստանյան լրատվամիջոցներում քիչ են այն նյութերը, որոնք ներկայացնեին բուն Իրանում տիրող տրամադրությունները, իրանցիների պատկերացումները ներկա ու սպասվելիք «սցենարների» մասին, նրանց պատասխանները սպառնալիքներին: Եվ հենց այս իմաստով ուշագրավ են մոսկովյան հրատարակություններից մեկում հրապարակված՝ Քվեբեկի համալսարանի (Մոնրեալ) քաղաքագիտության պրոֆեսոր Ժակ Լեւեկի տպավորությունները, որ նա ստացել է Իրան կատարած հատուկ այցելությունից:

Քաղաքականագետը Իրանում հանդիպումներ ու հանգամանալի զրույցներ է ունեցել տարբեր մակարդակների փորձագետների, դիվանագետների, պաշտոնյաների հետ: Առաջինը, որ նրան ապշեցրել է, եղել է զրուցակիցների միասնական լավատեսական ոգին իրադարձությունների հետագա զարգացման վերաբերյալ դատողություններում: Իրանցիները վստահ են, որ ԱՄՆ-ը լայնածավալ պատերազմ չի ծավալի իրենց դեմ: Իսկ եթե դա տեղի ունենա, ապա իրենք ի վիճակի են արժանի հակահարված տալու՝ Օրմուզի նեղուցի միջոցով շրջափակելով Պարսից ծոցը, որտեղով անցնում է համաշխարհային նավթարտահանման փոխադրատարների մոտ 40 տոկոսը: Անհրաժեշտության դեպքում Իրանը կարող է «մարտնչող» Ամերիկայի համար առավելագույնս ապակայունացնել իրավիճակը Աֆղանստանում, Իրաքում, ուժեղացնել դիմադրության (ահաբեկչության) ալիքը: Եվ ամենագլխավորը՝ կործանիչ հարված հասցնել ԱՄՆ-ի մերձավոր դաշնակցին՝ Իսրայելին: Իրանցիների կարծիքով, ամերիկացիներն ունեն բոլոր միջոցները կանխելու Իսրայելի միակողմանի գործողությունները, եւ նրանք դա կանեն, որպեսզի իրենք չմխրճվեն հակաիրանական (հակամուսուլմանական) հերթական արկածախնդրության մեջ:

Բոլոր զրուցակից փորձագետները, դրսեւորելով «աքեմենյան» նացիոնալիզմ, աներկբա համոզվածություն են հայտնել, որ երկրի իշխանությունները իրոք չեն ձգտում ձեռք բերելու միջուկային զենք: Նրանք պարզապես ուզում են դառնալ այսպես կոչված «վիրտուալ միջուկային պետություն», ինչպիսիք են, ասենք, Կանադան կամ Գերմանիան: Այսինքն՝ մի պետություն, որը յուրացրել է ուրանի հարստացման բոլոր փուլերը եւ լինելով միջուկային զենքի չտարածման պայմանագրի մասնակից, դրա արդյունքներն օգտագործում է բացառապես խաղաղ նպատակներով: Իրանցիներին խիստ վրդովեցնում ու վիրավորում է այն, թե ինչու ԱՄՆ-ը Իսրայելին թույլատրում է ամեն ինչ, այդ թվում նաեւ տնօրինելու ատոմային զենք, իսկ իրենցից միայն զիջումներ է պահանջում: Ընդ որում, ասել են նրանք, երբ մենք զիջումների ենք գնում, մեզ նորանոր պահանջներ են ներկայացվում: Սակայն այն հարցին, թե, այնուամենայնիվ, ինչ զիջումների կգնա Ահմադինեժադը ԱՄՆ-ի հետ համաձայնություններում, Ժակ Լեւեկը որոշակի պատասխան չի ստացել, ինչը նա պատճառաբանում է նրանով, որ Իրանի բարձրագույն իշխանական կառույցներում որոշումների ընդունումը միանգամայն անթափանց է, եւ ներկա նախագահը դրանում բնավ էլ առաջին դերը չի խաղում:

Շոշափելով Իրանին առնչված ամենատարբեր խնդիրներ, Լեւեկը, այդուհանդերձ, բավական հաճախ է զրուցակիցների առջեւ դրել Իսրայելի հավանական միակողմանի գործողությունների հարցը: Իրանցի բավականին բարձրաստիճան մի պաշտոնյա, գրում է Լեւեկը, ի պատասխան, դեմքին տալով լրջություն, չոր տոնով հայտարարեց. «Մեր մեջ ասած, ես կուզեի, որ լիներ նման հարձակում, որովհետեւ դրա անտարակուսելի հետեւանքը կլիներ Իսրայելի վերջը»:

Այլ կարծիք են հայտնել Լեւեկի զրուցակիցները Մոսկվայում, ուր նա այցելել է անմիջապես Իրանից հետո: Այստեղ համոզմունք են հայտնել, որ աճանը Իսրայելը հարված կհասցնի Իրանին՝ անկախ Օբամայի դիրքորոշումից, քանզի եթե Իրանն իրոք դառնա միջուկային տերություն, ապա իրական սպառնալիք կդառնա առհասարակ Իսրայելի գոյության համար: Ռազմական առումով Իսրայելը ի վիճակի է իրականացնելու միջուկային օբյեկտները ռմբակոծելու գործողություն: Ի դեպ, վարչապետ Նաթանյահուն, որը նորերս ճանաչվել է որպես աշխարհի ամենաազդեցիկ հրեան, լի է վճռականությամբ եւ իր աջական կառավարությամբ ընդունակ է նման քայլի:

Առհասարակ ռուս-իրանական հարաբերությունների կապակցությամբ Թեհրանում եւ Մոսկվայում արտահայտված մոտեցումները ի չիք են դարձնում երկու պետությունների փոխառնչությունների «բարեկամական» բնույթի վերաբերյալ պատրանքները: Իրանցիների կարծիքով՝ Ռուսաստանն այլեւս չլինելով գերտերություն, իրենց երկիրը օգտագործում է որպես խաղաքարտ ռուս-ամերիկյան հարաբերությունների համատեքստում, ինչն էլ անվստահության անթաքույց տրամադրություններ է ստեղծում Մոսկվայի հանդեպ: Բանը հասել է նույնիսկ ծայրահեղությունների: «Ի՞նչ կարող ենք մենք սովորել Ռուսաստանից ինչպես էկոնոմիկայի եւ տեխնիկայի, այնպես էլ մշակույթի առումով, կանադացուն ասել է ռուսաստանագետ մի իրանցի, բավական է մի քանի տասնյակ կիլոմետր դուրս գաս Մոսկվայից եւ կհամոզվես, որ «երրորդ աշխարհը» Ռուսաստանն է եւ ոչ թե Իրանը: Մենք եվրոպական երկրների հետ շատ ավելի ընդհանուր բան ունենք»: (Իհարկե, դժվար է պատկերացնել մոլեռանդ մուսուլմանական երկրի «ընդհանրությունները» Եվրոպայի հետ): Իրանցիները մտավախություն ունեն, որ Ռուսաստանը, պաշտպանելով հակաիրանական նորանոր պատժամիջոցները, որոնք արդյունք չեն տալիս, կարող է ի վերջո ներքաշվել ռազմական ուժի կիրառման թույլատրելիության գործընթացի մեջ:

Մյուս կողմից, Մոսկվայի քաղաքական շրջանակներում, Լեւեկի դիտարկումով, միջուկային հարցերում Իրանի համառությունը անբավականություն է առաջացնում ռուս-ամերիկյան հարաբերությունների բարելավման ֆոնի վրա: Մի հարցում, սակայն, Լեւեկը միասնական տեսակետ է արձանագրել. ռազմական գործողությունը Իրանի դեմ ապակայունացնող աղետալի հետեւանքներ կունենա Ռուսաստանին հարող մուսուլմանական երկրներում, եւ դրա ալիքները կթափանցեն սեփական տարածք: Գուցե խնդրի գերկարեւորությունից է թելադրված, ասել է մոսկվացի փորձագետներից մեկը, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականության իրանական ուղղությունը անձամբ տնօրինում է Վլադիմիր Պուտինը:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Կաստրոն Իսրայել-Իրան հարաբերությունների մասին

*«Հրեաներին միշտ մեղադրում են, մահմեդականներին՝ երբեք»*

**Կուբայի նախկին ղեկավար Ֆիդել Կաստրոն անսպասելիորեն խիստ արտահայտություններ է արել Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հասցեին: Ամերիկյան The Atlantic հանդեսի մեկնաբան Ջեֆրի Գոլդբերգին տված հարցազրույցում նա Իրանի նախագահին մեղադրել է հակահրեականության եւ Հոլոքոստի ժխտման մեջ:**

**Հարցազրույցի գլխավոր թեման Իսրայել-Իրան հարաբերություններն են: Կաստրոյի խոսքերով, Իսրայելը անվտանգություն ձեռք կբերի միայն սեփական միջուկային զինանոցից հրաժարվելու դեպքում: «Բոլոր միջուկային տերությունները եւս պետք է ոչնչացնեն իրենց ատոմային զինանոցները: Համընդհանուր եւ միաժամանակյա միջուկային զինաթափումը պաշտած խնդիր է, բայց ներկա պահին, ցավոք, անիրագործելի է», խոստովանել է Կաստրոն:**

**Կաստրոն նաեւ կտրականապես մերժել է Մահմուդ Ահմադինեժադի հակահրեականությունը եւ Հոլոքոստի ժխտումը: «Եթե Իրանի կառավարությունը խաղաղություն է ուզում, ապա ճիշտ կվարվի, եթե ընդունի հակահրեականության եզակիությունը եւ հասկանա, թե հրեաներն ինչու են մտահոգվում իրենց անվտանգության համար», ասել է նա:**



**«Հրեաներին փնովում են արդեն երկու հազար տարի: Ոչ ոքի երբեք այդպես չեն վիրավորել: Մահմեդականների հետ անհամեմատ լավ են վարվում: Միշտ եւ ամեն ինչում հենց հրեաներին են մեղադրում, իսկ մահմեդականներին երբեք որեւէ բանում չեն մեղադրել», հայտարարել է Կաստրոն:**



# Վատիկանը քրիստոնյաներին մեղադրեց Եվրոպայի իսլամացման համար



**Վատիկանի բարձրաստիճան ներկայացուցիչ հայր Պիեռո Գեդդոն եվրոպացի քրիստոնյաներին կոչ է արել ավելի շատ երեխաներ ծնել Եվրոպայի իսլամացում թույլ չտալու համար: Այդ մասին հաղորդում է Catholic culture կայքէջը:**

**Գեդդոն քրիստոնյաներին մեղադրել է «կրոնական վակուում» ստեղծելու մեջ: Նրա խոսքերով, այդ դատարկությունը «լցվում է իսլամով»: Հայր Գեդդոն հայտարարել է, որ Իտալիայում բնիկների թիվն ամեն տարի կրճատվում է 12-13 հազարով, մինչդեռ ներգաղթյալների միջավայրում (նրանց կեսից ավելի մահմեդականներ են) ծնունդների թիվն անշեղորեն աճում է:**

**Ի դեպ, Իտալիան ամեն տարի ընդունում է մոտ 200 հազար օրինական ներգաղթյալների:**

**«Եթե մենք մեզ համարում ենք քրիստոնեական երկիր, ապա պետք է դավանենք քրիստոնեական արժեքներ: Դա մեզ կօգնի լուծելու դատարկ օրորոցների խնդիրը», հայտարարել է Պիեռո Գեդդոն:**

# Ալժիրի ղեկավարությունը չի ընդունել Աբբասին



**«Համաս» խմբավորման Palestine-Info կայքը ալժիրյան վստահելի աղբյուրներ վկայակոչելով հաղորդում է, որ Ալժիրի ղեկավարությունը հրաժարվել է ընդունել Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասին՝ վերջերս Մաղրիբի երկրներում նրա կատարած ուղեւորության ժամանակ:**

**Նույն աղբյուրի համաձայն, նման «անհյուրընկալության» պատճառը Ալժիրի դժգոհությունն է այն բանից, որ Պաղեստինյան ինքնավարության պաշտոնյաները հափշտակում են պաղեստինցիներին ուղարկվող մարդասիրական օգնությունը: Արաբական աշխարհում Ալժիրը Քաթարի եւ Սաուդյան Արաբիայի հետ պաղեստինցիների խոշորագույն նվիրատուն է:**

**Ալժիրցիների դժգոհության մյուս պատճառն այն է, որ Աբբասը իրենց հիշում է միայն Պաղեստինի գանձարանը դատարկվելու ժամանակ, գրում է նույն աղբյուրը: Ըստ որում, Աբբասը բնավ հաշվի չի առնում Ալժիրի քաղաքական խորհուրդները:**

**Ամեն դեպքում հավաստիորեն հայտնի է, որ Պաղեստինյան ինքնավարության ղեկավարը Ալժիր չի այցելում արդեն 5 տարի, մինչդեռ «Համասի» ներկայացուցիչներն այդ տարիներին հանդիպումներ են ունեցել ալժիրցի ղեկավարների հետ:**

# Սորոսը 100 մլն դոլար նվիրաբերեց իրավապաշտպաններին



Human Right Watch միջազգային իրավապաշտպանական կազմակերպությունը ֆինանսիստ Ջորջ Սորոսից կստանա 100 մլն դոլարի դրամաշնորհ: Դա երբեւիցե Սորոսի արած ամենամեծ նվիրատվությունն է, գրում է «Նյու Յորք թայմս» թերթը: Տվյալ դրամաշնորհը ամենամեծն է նաեւ հիշյալ կազմակերպության համար:

Թերթին տված հարցազրույցում Սորոսն ասել է, որ այդ նվիրատվությունն առաջինն է մոտ ժամանակներս իր բաշխելիք խոշոր դրամաշնորհների շարքում: Սորոսի խոսքերով, ինքը սկզբում մտադրվել էր նվիրաբերել իր բոլոր խնայողությունները, բայց հետո հրաժարվել էր այդ մտքից: 2010-ին նա ընդհանուր առմամբ (HRW-ի դրամաշնորհը ներառյալ) արդեն նվիրաբերել է 700 մլն դոլար:

Այս տարվա դրամաշնորհների մեջ HRW-ին Սորոսի հատկացրած գումարը մեծությամբ երկրորդն է: Ինդիանայի համալսարանի մարդասիրական կենտրոնի տվյալներով, ոմն շրջանավարտ Տեխասում գտնվող Բեյլորի համալսարանին 200 մլն դոլար է հատկացրել բժշկական հետազոտությունների ծրագրերի համար:

Human Right Watch-ի գործադիր տնօրեն **Քենթ Ռոթի** խոսքերով, կազմակերպությունը ստացած փողերով, ի թիվս այլ բաների, աշխարհում կհավաքագրի 120 նոր աշխատակիցների, կբացի նոր բաժանմունքներ:

HRW-ն հիմնվել է 1970-ին եւ ներկայումս գործում է յոթ տասնյակ երկրներում: Կենտրոնակայանը Նյու Յորքում է: Կազմակերպությունը հետաքննում եւ վավերագրում է իրավախախտումների դեպքերը:

# Էդիսոն Դենիսովի երաժշտության հայաստանյան պրեմիերան

Ամռան ամենաթեժ տարին «Նոր երաժշտական նախաձեռնություններ» ցիկլի (որը ես հիմնել եմ 1992-ին) շրջանակներում Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ Էդիսոն Դենիսովին նվիրված երեկո: Այն նշանակալի էր նրանով, որ ականավոր կոմպոզիտորի ստեղծագործությունները Երեւանում հնչեցին առաջին անգամ, եւ առհասարակ հայ կատարողներն առաջին անգամ էին նվագում Դենիսովի երաժշտությունը: Այդուհանդերձ ներկաների համար, որոնց մեծ մասը պրոֆեսիոնալներ էին, Դենիսովի անունը զուգորդվում է 20-րդ դարի ավանգարդի հետ: Վստահորեն կարելի է ասել, որ տվյալ համերգից հետո Դենիսովի երաժշտության բարեկամների շրջանակը զգալիորեն ընդլայնվեց:

Օմսկում ծնված Դենիսովը (1929-1996) մոսկովյան դպրոցի՝ աշխարհում առավել ճանաչված կոմպոզիտորներից մեկն է: Նրա առանձնահատուկ երաժշտական օժտվածությունը եւ վերլուծական միտքը, ռուս առաջադեմ մտավորականությանը բնորոշ՝ ամենայն նորի հանդեպ ընկալունակությունը եւ միաժամանակ հայրենի մշակույթի հետ անխզելի կապը (օրինակ՝ Պ. Բուլեզը նշում էր «ռուսական գույները» եւ մտածողության ծիսականությունը), բազմակողմանի խորագիտակությունը եւ երաժշտական հետազոտողի ու մանկավարժի տաղանդը, վերջապես երաժշտություն տարածելու եւ արվեստի նոր անուններին աջակցելու՝ ժամանակակից կոմպոզիտորի համար հազվագյուտ գործունեությունը (պատահական չէ, որ նա գլխավորեց 1989-ին Մոսկվայում բացված Արդի երաժշտության ընկերակցությունը) այդ անձնավորության եզակիության պերճախոս վկայություններն են:

Վաղ՝ 1960-ականների սկզբին առաջացնելով միջազգային հետաքրքրություն եւ շուտով ճանաչում ստանալով արդի երաժշտության վարպետների շրջանում, Էդիսոն Դենիսովը, ընդհուպ Փարիզում իր ողբերգական վախճանը, «վճարում» էր Արեւմուտքում իր ժողովրդականության համար: Երկար տարիներ լինելով «այլախոհի» կարգավիճակում, Դենիսովը բացառապես արտասովոր կամքի եւ արվեստագետի սկզբունքայնության շնորհիվ խորհրդային երաժշտության մեջ նոր գաղափարների կատալիզատոր դարձավ Սոֆիա Գուբայդուլինայի եւ Ալֆրեդ Շնիտկեի հետ մեկտեղ:

Հայաստանի առաջադեմ երաժիշտները ի դեմս հիշյալ կոմպոզիտորների տեսնում էին նեցուկ սեփական ստեղծագործության համար, իսկ 1960-ականների վերջերից նրանց անձնական բարեկամությունը էլ ավելի ամրապնդեց երաժշտության նոր գեղագիտության ընդհանուր սկզբունքները:

Երեւանում Դենիսով կատարվել էր միայն մեկ անգամ՝ 1971 թ., «Երաժշտություն-20-րդ դար» անսամբլի մեծ հյուրախաղերի ժամանակ (գեղարվեստական ղեկավար՝ մոսկովյան շատ խոշոր դաշնակահար, հայկական երաժշտության բարեկամ Ալեքսեյ Լյուբիմով): Կատարվել էր նեոֆոլկլորային նշանավոր «Լացը» սոպրանոյի, դաշնամուրի եւ հարվածայինների համար (Լիդիա Դավիդովա, Ալեքսեյ Լյուբիմով, Մարկ Պեկարսկի): Ապա 1980-ականների սկզբներին Դենիսովը հյուրընկալվեց Հայաստանի կոմպոզիտորների միությունում, որտեղ ծանոթացրեց իր երաժշտության ձայնագրությանը: Հաջորդեց բարեկամությունը հայ գործընկերների, մասնավորապես Տիգրան Մանսուրյանի, Աշոտ Սաթյանի, Աշոտ Զոհրաբյանի, Երվանդ Երկանյանի, Մարտուն Իսրայելյանի եւ այլոց հետ: Տարիներ անց նա առանձնակի հետաքրքրություն հանդես բերեց Զոհրաբյանի նկատմամբ՝ նրան դարձնելով Արդի երաժշտության ընկերակցության անդամ, ապահովելով ստեղծագործությունների կատարումը Ռուսաստանում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում: Դենիսովի շնորհիվ Զոհրաբյանը Փարիզից պատվեր ստացավ գրելու «Parable» (Առակ) կամերային անսամբլի համար (կատարվեց 1993-ին Փարիզի «Présences» փառատոնում):

Ասվածից հետո պարզ է, որ մեզ մոտ Դենիսովի երաժշտության չկատարվելը աններելի է: 2009-ին կոմպոզիտորի 80-ամյակի առթիվ ուզեցինք քավել մեղքը, բայց հովանավորման տանջալի պրպտումը ձգձգեց համերգի կազմակերպումը: Այն ի վերջո կայացավ Երեւանի քաղաքապետարանի կիսատ ֆինանսավորմամբ, ինչը մասամբ փոխհատուցեց ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը: Թույլ տվեք երախտագիտություն հայտնել տվյալ կազմակերպություններին, ինչպես նաեւ անձամբ Հայաստանի հանրային ռադիոյի ղեկավար Արմեն Ամիրյանին:

Նշեմ գլխավորը. համերգը առաջացրեց հասարակական արձագանք, հետաքրքրություն Մոսկվայում, այդ թվում ՌԴ մշակույթի նախարարությունում, եւ դրանով մենք պարտական ենք հայ երաժիշտ-կատարողներին: Ստեղծագործական մեծ ներուժը եւ նոր երաժշտություն նվագելու անկեղծ ցանկությունը միշտ հասնում են նպատակին: Տվյալ դեպքում Էդիսոն Դենիսովի երեք ստեղծագործություններ՝ Դաշնամուրի վարիացիաները, սոպրանոյի եւ գործիքային անսամբլի «Իտալական երգերը» (խոսք՝ Ա. Բլոկի) եւ Դաշնամուրային տրիոն Երեւանում գտան արժանավոր մեկնաբանների:

Կատարված ստեղծագործությունները վերաբերում են Էդիսոն Դենիսովի գործունեության վաղ (1960-1970-ական թթ.), բայց չափազանց կարեւոր շրջանին, երբ կոմպոզիտորը, պահպանելով գրության արեւմտաեվրոպական տեխնիկան (դոդեկաֆոնիա, սերիալիզմ), նորովի գիտակցեց 20-րդ դարի սկզբի ռուսական ավանգարդի ժառանգությունը: Սակայն Դենիսովը, որպես կանոն, չէր խառնում ոճերը, ինչպես նաեւ հակված չէր կիրառվող ավանդույթի անորոշությանը: Ընդհակառակը, նրա տրամաբանական կուռ մտածողությանը բնորոշ էր ոճի հստակությունը, որն արտացոլվում է ընտրված երաժշտական միջոցների ճշգրիտ համակարգման մեջ: Ի դեպ, միջոցների մեկնաբանման բազմազանությունը վկայում է Դենիսովի կոմպոզիտորական նուրբ վարպետության մասին, որը երաժշտական նյութի կոնստրուկտիվ տարրերին հաղորդում է նոր իմաստ, էսթետիկական նոր բովանդակություն:

Բնականաբար, մի քանի ստեղծագործությունը չի կարող պատկերացում տալ Դենիսովի ամբողջ գործունեության մասին: Դրանք սոսկ «այցեքարտն» են հիանալի նորարար կոմպոզիտորի, որն առաջիններից մեկը դիմեց կոմպոզիցիայի եւ երաժշտական տարածության կազմակերպման նոր տրամաբանությանը, երաժշտության մեջ պոեզիայի եւ գեղանկարչության սիմվոլիկային:

Կոմպոզիտորի վերաբերյալ տողերիս հեղինակի կարդացած դասախոսությունից հետո համերգի երաժշտական մասը բացած Դաշնամուրի վարիացիաները (1961) ունկնդիրներին անմիջապես մտցրին բազմակողմանիորեն հղկված երաժշտական բյուրեղի աշխարհ: Վեց վարիացիաներով թեմայի այդ փոքր ցիկլում սերիական տեխնիկայի ընտրությունը չի խանգարում գունագեղ ներկապնակի ստեղծմանը: Ի տարբերություն շատ կոմպոզիտորների նախատիպար դարձած Ա. Վեբեռնի հայտնի Վարիացիաների (երկ 27), Դենիսովը զարգացումը տանում է դեպի մասշտաբային ընդհանրացում, որը Հայկ Մելիքյանի կատարմամբ ընդգծվեց ռիթմիկ հակադրությունների սրությամբ:

Առհասարակ կուզենայի հատկապես ընդգծել այդ դաշնակահարի, միջազգային մի քանի մրցույթների դափնեկրի, արդի երաժշտության ճշմարիտ մեկնաբանի տաղանդը, ինչում այսօր նրան հավասարը չկա Հայաստանում: Մենք պարտավոր ենք բոլոր պայմանները ստեղծել, որպեսզի Մելիքյանի արվեստը լայնորեն մատչելի դառնա պատրաստված ռուսաստանյան եւ, իհարկե, արեւմտյան լսարաններին: Վերջապես հարկավոր է կոլեկտիվների այցելությունների մակարդակով առկա մշակութային շփումները փոխադրել անհատ երաժիշտների հարթություն, որոնք կկարողանան ըստ արժանվույն ներկայացնել ազգային մշակույթի լավագույնը: Եվ քանի որ հիմա չի գործում «Հայհամերգ» գործակալությունը, երաժշտական կադրերի արտահանման ողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի մշակույթի նախարարության ուսերին:

Սոպրանոյի, ֆլեյտայի, ջութակի, գալարափողի եւ դաշնամուրի համար գրված «Իտալական երգերը» (1964) երաժշտական-բանաստեղծական հուզիչ երկ է: Դենիսովը կյանքի ունայնության տրամադրության կրոնականությամբ տոգորված Ա. Բլոկի չորս բանաստեղծությունները («Ռավեննա», «Ֆլորենցիա», «Վենետիկ», «Վերափոխումն»՝ ըստ Ֆրա Ֆիլիպպո Լիպպիի) վերածել է մեներգային կանտատի: Սերիալիզմի տեխնիկայի վրա հիմնված պարտիտուրի նրբաճաշակ գործիքայնությունը ի հայտ է բերում մեներգային պարտիան, ըստ որում երրորդ մասը գրված է սոպրանոյի ու դաշնամուրի համար: Վոկալ պարտիայի բարդությունը գերազանց հաղթահարեց երիտասարդ երգչուհի Դիանա Հարությունյանը, որը գերում է ձայնառության տեմբրային հագեցվածությամբ եւ պլաստիկայով: Ամբողջ անսամբլը, որի կազմում էին նոր երաժշտության պրոֆեսիոնալ կատարմամբ համոզող մենակատարներ Գեւորգ Ավետիսյանը (ֆլեյտա), Գայանե Աբրահամյանը (ջութակ), Վարդան Անաստոյանը (գալարափող) եւ Հայկ Մելիքյանը (դաշնամուր), ունկնդիրներին գերեց երաժշտականությամբ եւ ոճային զտվածությամբ: Անկասկած, դրա համար պարտական ենք դիրիժոր, ժամանակակից երաժշտության հմուտ վարպետ Ռուբեն Ասատրյանին, որը ղեկավարել է 20-21-րդ դարերի բազմաթիվ ստեղծագործությունների հայկական պրեմիերաները:

Երեկոն ավարտած Դաշնամուրային տրիոն (1971) Դենիսովի բեկումնային երկն է, որի շատ հնարքներ նա հետագայում զարգացրեց, մասնավորապես՝ պոլիֆոնիկ ֆակտուրայի կազմակերպման առանձնահատկությունները, ինչը կատարողական հատուկ դժվարություն է ներկայացնում: Ա. Խաչատրյանի անվան Եռյակի (Արմինե Գրիգորյան-դաշնամուր, Կարեն Շահգալդյան (ՌԴ)-ջութակ, Կարեն Քոչարյան-թավջութակ) մեկնաբանությունը տպավորվեց կատարողների մտքի ու զգացմունքի միաձուլմամբ, ինչը առհասարակ բնորոշ է այդ հիանալի կոլեկտիվին: Դրա շնորհիվ տեմբրային առումով հավասարակշռված օրգանիզմը հմայված դահլիճին փոխանցեց ֆակտուրայի ձայների բարդ միահյուսվածքը, որի լուծման վարպետությունը արդեն 1970-ականներին Էդիսոն Դենիսովին դասեց 20-րդ դարի առաջատար կոմպոզիտորների շարքին:



ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ԳՅՈՒՄՐԻ

## Մեկնարկում է Գյումրու 7-րդ միջազգային բիենալեն

**«Գյումրին սառեցված հիշողության արխիվ է՝ հետաղետյան, հետավտորիտար, հետարդյունաբերական արխիվ՝ առանց արխիվացման: Կարո՞ղ են արվեստագետները ապրել եւ ստեղծագործել արխիվում... Կարո՞ղ է արդյոք հիշողությունը գոյություն ունենալ՝ առանց արխիվացման... Բնության արհավիրքները մեզ սովորեցնո՞ւմ են ինչ-որ բան հիշել: Կարո՞ղ ենք ինչ-որ բան տանել դեպի ապագա, եւ ո՞վ է ապագայի արվեստագետը...»: Այս եւ նման այլ հարցերի շուրջը իրենց տեսողական մտորումները կծավալեն սեպտեմբերի 10-30-ը կայանալիք Գյումրու 7-րդ միջազգային բիենալեի մասնակից արվեստագետները: Հերթական բիենալեն կընթանա «Արխիվների արխիվացում կամ ապագայի հիշողություն» խորագրի ներքո:**

**Գյումրիում միջազգային բիենալեները սկսել են կազմակերպվել երկրաշարժի տասներորդ տարելիցից՝ նպատակ ունենալով խթանել քաղաքի մշակութային կյանքի վերածնունդը: Նախորդ վեց անգամներին դրանց ընդհանուր առմամբ մասնակցել են չորս տասնյակի չափ երկրների շուրջ 400 արվեստագետներ: Պատասխանատուների տեղեկացմամբ՝ 7-րդ բիենալեում ներկայացվելիք ցուցադրանքներում եւ շնորհանդեսներում խոսքը հիմնականում կվերաբերի ժամանակակից արվեստի եւ կրթության, երիտասարդության, տեղեկատվական հասարակության, ժամանակակից արվեստի եւ մշակութային ժառանգության փոխհարաբերությունների հարցերին:**

Գ. Մ.

## Ֆրանսիական ջազ վեցյակը Հայաստանում




**Արդեն մի քանի օր Հայաստանում համերգներով հանդես է գալիս Ֆրանսիայից ժամանած ջազ սեքստետը՝ ղեկավարությամբ շեփորահար Քրիստոֆ Լելոյլի: Խմբի անդամները՝ Ռաֆայել Իմբերթը (կլառնետ եւ բաս սաքսոֆոն), Թոմաս Սեյվին (բարիտոն սաքսոֆոն), Կարին Բոնեֆոյը (դաշնամուր), Սիմոն Թայլոն (բաս) եւ Սեդրիկ Բեքը (հարվածային գործիքներ), առանձին-առանձին շատ են շրջագայել ասիական ու աֆրիկյան երկրներով, սակայն որպես միացյալ նվագախումբ՝ սա նրանց առաջին արտասահմանյան ուղեւորությունն է:**

**Ինչպես Երեւանի «Օրեգանո» մշակութային ակումբում տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ նշեց խմբի մենեջեր Աստղիկ Չոլաքյանը. «Նման այցելությունը հնարավոր դարձավ շնորհիվ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ջանքերի եւ Cultures Franc, ADAMI, SPEDIDAM միությունների ու «Արամ Խաչատրյան» հաստատության հովանավորության: Այս հարցում մեծ դերակատարություն է ունեցել նաեւ Ավինյոնում գործող AJMI կազմակերպությունը, որը ջազային տաղանդներ հայտնաբերելու եւ նրանց շրջագայությունները կազմակերպելու հարուստ փորձ ունի:**

**Ջազային վեցյակի ղեկավար Քրիստոֆ Լելոյլի խոսքերով՝ «իրենք հիմնականում Մարսել քաղաքից են, որտեղ հայկական մեծ համայնք կա»: Հայաստան գալուց առաջ շատերն են իրեն ասել, որ գնում է իր «հայկական արմատներին մերձենալու»: Իրականում, ինքը շատ հայ ընկերներ ունի եւ քաջածանոթ է հայկական երաժշտությանը: Ավելին՝ իրենց համոզմամբ, Երեւանը Հարավային Կովկասի «ջազային մայրաքաղաքն է»: Խմբի անդամները մեծ ցանկություն ունեն ծանոթանալու եւ հետագայում շփվելու հայկական ջազի ներկայացուցիչների հետ:**

**ՀՀ Լոռու մարզի եւ Հարավային Ֆրանսիայի Պրովանսի տարածաշրջանի միջեւ 2003 թ. ստորագրված մշակութային համագործակցության պայմանագրի շրջանակներում 2 հիմնական համերգները տեղի կունենան Վանաձորում եւ Սպիտակում: Ֆրանսիական ջազ վեցյակը 3 համերգներով հանդես կգա երեւանյան ջազային ակումբներում:**

Լ. Լ.

# Դրամատիկ վերջաբան

## *Պատմությունը քիչ էր մնում կրկնվեր*

15 տարի առաջ՝ 1995-ի սեպտեմբերի 6-ին Հայաստանի ազգային հավաքականը Սկոպիեյում Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում իր անդրանիկ հաղթանակն էր տոնել՝ 2-1 հաշվով պարտության մատնելով մակեդոնացիներին: Ընդ որում խաղավերջում դաշտի տերերը 11 մ հարվածի իրավունք էին ստացել, սակայն դարպասապահ Արմեն Պետրոսյանը հետ էր մղել Բաբունսկու հարվածը՝ ապահովելով հայ ֆուտբոլիստների հաղթանակը:


armsport.am

Եվ ահա 15 տարի անց կրկին Սկոպիեյում պատմությունը կարող էր կրկնվել: Չափազանց լարված ու դրամատիկ պայքարում կարող էին հաղթել թե՛ մակեդոնացիները, թե՛ հայերը, իսկ արդյունքում գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 2-2:

Մակեդոնիայի հավաքականը խաղասկզբում մի այնպիսի ճնշում էր գործադրել մեր դարպասին, որին դիմանալն այնքան էլ հեշտ չէր: Լավ էր, որ այդ օրն իր բարձրության վրա էր մեր դարպասապահ Ռոման Բերեզովսկին, որը մի շարք դրվագներում պարզապես հրաշքով փրկեց թիմակիցներին վերահաս գոլերից: Ինչ խոսք, նրա վստահ խաղը լրացուցիչ վստահություն հաղորդեց մեր ֆուտբոլիստներին, որոնք աստիճանաբար ուշքի գալով մեկնարկային ճնշումից, սկսեցին իրենք էլ անհանգստացնել մրցակցի դարպասապահին: Առաջինը կարող էր հաջողության հասնել Հենրիխ Մխիթարյանը, որը 17-րդ րոպեին 11 մ նշակետի մոտից աններելիորեն վրիպեց:

Այս խաղում լավ էին համագործակցում մեր կիսապաշտպաններն ու հարձակվողները, ավելի սերտ կապ էր հաստատվել Մխիթարյանի եւ Մովսիսյանի միջեւ: Եվ հենց այս երկյակի համագործակցության արդյունքում «ծնվեց» հանդիպման առաջին գոլը: 41-րդ րոպեին Մխիթարյանի փոխանցումից հետո Մովսիսյանը բավական դժվար դրությունից, սուր անկյան տակ գրավեց դարպասը: Առաջ անցնելով նշենք, որ Մովսիսյանը խաղավերջում երկու անգամ ավելի պարզ իրադրություններում չկարողացավ մոտ տարածությունից գրավել դարպասը, այլապես հավաքականի հաղթանակն ապահովված կլիներ:

Դեռ չէինք հասցրել ուրախանալ խփած գոլով, երբ մրցակիցը վերականգնեց հավասարակշռությունը: Սա էլ որերորդ անգամ հայ ֆուտբոլիստներն արդյունքի հասնելուց հետո շատ շուտ գոլ են բաց թողնում: Դաշտի տերերից աչքի ընկավ Ջուրովսկին:

Ընդմիջումից հետո մեր ֆուտբոլիստները զգալիորեն ակտիվացրին հարձակողական գործողությունները: Մրցակիցն էլ շարունակում էր ակտիվ ու վտանգավոր գրոհները, որոնք Բերեզովսկու վստահ խաղի շնորհիվ արդյունքի չէին հասնում:

Խաղավերջում մեր ֆուտբոլիստները տիրել էին նախաձեռնությանը եւ մի քանի վտանգավոր գրոհներ ձեռնարկեցին, որի արդյունքում Էդգար Մանուչարյանը խփեց այնքան սպասված 2-րդ գոլը: Թվում էր, թե գոնե այս անգամ կհաջողվի պահպանել հաղթական հաշիվը, մանավանդ որ խաղի ավարտին մի քանի րոպե էր մնացել: Սակայն հերթական կոպիտ սխալը թույլ տվեցին մեր ֆուտբոլիստները: Արարատ Առաքելյանն առանց որեւէ անհրաժեշտության ձեռքով խաղաց ու Նաումոսկին 11 մ հարվածով ի չիք դարձրեց հաղթանակի համար ներդրված մեր բոլոր ջանքերը: Այսպես ՀՀ հավաքականը զրկվեց առաջին հաղթանակը տոնելու հաճույքից, թեեւ եթե անկեղծ լինենք, կարող էր նաեւ պարտվել:

**Մրցաշարային աղյուսակ**
**B խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իռլանդիա | 2 | 2 | 0 | 0 | 4-1 | 6 |
| 2. Սլովակիա | 2 | 2 | 0 | 0 | 2-0 | 6 |
| 3. Ռուսաստան | 2 | 1 | 0 | 1 | 2-1 | 3 |
| 4. Հայաստան | 2 | 0 | 1 | 1 | 2-3 | 1 |
| 5. Մակեդոնիա | 2 | 0 | 1 | 1 | 2-3 | 1 |
| 6. Անդորրա | 2 | 0 | 0 | 2 | 1-5 | 0 |

# Հայկական արգելափակոց վրացիների առջեւ

**Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարն ավարտեց Վրաստանի ընտրանու նկատմամբ տոնած հաղթանակով (2-0)՝ զրկելով վրացիներին հաջորդ փուլի ուղեգրից: Վրաստանի հավաքականը խմբում 2-րդ տեղը զիջեց Թուրքիայի հավաքականին: Սակայն վերջինս եւս հաջորդ փուլ չմտավ: 10 խմբերում 2-րդ տեղը զբաղեցրած հավաքականներից պայքարը կշարունակեն Իսպանիան, Անգլիան, Բելառուսն ու Իռլանդիան: Խմբերում հաղթողներ ճանաչվեցին Ռումինիան, Շվեյցարիան, Իտալիան, Հոլանդիան, Չեխիան, Շվեդիան, Խորվաթիան, Ուկրաինան, Հունաստանն ու Շոտլանդիան:**

**Վերադառնալով ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի ելույթներին, հարկ է նշել, որ մեր երիտասարդ ֆուտբոլիստները հաջող քննություն հանձնեցին: Եվ եթե չլիներ մեկնարկային ձախողումը, երբ մեր ընտրանին չորս անընդմեջ պարտություն կրեց շվեյցարացիների ու թուրքերի հետ անցկացրած 2-ական հանդիպումներում, ինչպես նաեւ Երեւանում էստոնացիների հետ խաղում ձեռքից բաց չթողներ հաղթանակը, ապա գուցե հաջողվեր ուղեգիր նվաճել: Բայց ամենակարեւորը Ֆլեմինգ Սերիցլեւին հաջողվեց մարտունակ կոլեկտիվ կազմավորել, որի մի խումբ անդամները նաեւ հաջող ելույթներ են ունենում ազգային հավաքականում: Եվ շատ ցավալի է, որ դանիացի մարզիչը չի շարունակելու իր բեղմնավոր աշխատանքը Հայաստանում, այլ տեղափոխվում է Իրան:**

**Եվրոպայի առաջնությունների ընտրական մրցաշարերում Հայաստանի երիտասարդական հավաքականն իր պատմության մեջ 2-րդ արդյունքը ցույց տվեց: Ավելի հաջող հավաքականը հանդես էր եկել 2002 թ. ընտրական մրցաշարում՝ վաստակելով 14 միավոր 10 հանդիպումներում: Իսկ ահա արդյունավետությամբ ներկայիս հավաքականի արդյունքը լավագույնն է: Խփվեց 18 գոլ, որից 7-ի հեղինակը 6 խաղի մասնակցած Հենրիխ Մխիթարյանն է: Այս ցուցանիշով նա ընտրական մրցաշարի լավագույն ռմբարկուների շարքում է: 7-ական գոլ են խփել նաեւ չեխ Թոմաշ Պեկգարտը եւ լատվիացի Էդգարս Գաուրաչսը:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շվեյցարիա | 10 | 6 | 2 | 2 | 15-8 | 20 |
| 2. Թուրքիա | 10 | 5 | 1 | 4 | 13-11 | 16 |
| 3. Վրաստան | 10 | 4 | 3 | 3 | 12-9 | 15 |
| 4. Հայաստան | 10 | 4 | 1 | 5 | 18-19 | 13 |
| 5. Էստոնիա | 10 | 3 | 3 | 4 | 9-16 | 12 |
| 6. Իռլանդիա | 10 | 1 | 4 | 5 | 11-15 | 7 |

# Արոնյանին չհաջողվեց ուղեգիր նվաճել

**Շանհայում ավարտվեց շախմատի մրցաշարը, որի երկու հաղթողներն իրավունք ստացան Անանդի եւ Կառլսենի հետ վիճարկելու «Մեծ սաղավարտ» մրցանակը: Ավարտական տուրում Արոնյանը ոչ-ոքի խաղաց Շիրովի հետ, իսկ Կրամնիկը հաշտություն կնքեց Վան Հաոյի հետ: Արդյունքում Շիրովը 12 միավորով դարձավ մրցաշարի հաղթող, իսկ Արոնյանն ու Կրամնիկը վաստակեցին 7-ական միավոր:**

**Ուղեգրի 2-րդ տիրոջը որոշելու համար Կրամնիկն ու Արոնյանը լրացուցիչ մրցախաղ անցկացրին: Ըստ armchess.am-ի, առաջին կայծակնային պարտիան շահեց Կրամնիկը, 2-րդում Արոնյանը ռեւանշի հասավ: Վճռորոշ՝ 3-րդ պարտիայում հաղթելով, Կրամնիկը նվաճեց Բիլբաոյի ուղեգիրը:**

# Մրցաշարում եռիշխանություն է

**Ցյուրիխում ընթացող համալսարանական շախմատիստների աշխարհի առաջնությունում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 4-րդ տուրում սպիտակներով ոչ-ոքի խաղաց Գանզորիգ Էրդենի հետ: Մխիթարյանը 2 միավորով 26-րդ տեղում է:**

**Առաջատարի դերը 3,5-ական միավորով ստանձնել են Իլյա Խմելնիկերը, Յու Վանը եւ Բայարսաիխան Գունդավան: Վանն ու Խմելնիկերը հաշտություն կնքեցին միմյանց հետ, իսկ Գունդավան հաղթեց Սուսանտո Մեգարանտոյին:**

# Եվրո-2011-ը 24 թիմով

Թուրքիայում կայացած բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի գործկոմի նիստում հավանություն է տրվել Լիտվայի ֆեդերացիայի առաջարկին՝ 2011-ի Եվրոպայի առաջնության մասնակիցների ցանկը 16-ից հասցնել 24-ի: Նիստի մասնակիցների համոզմամբ դա կխթանի Եվրոպայում բասկետբոլի հետագա զարգացմանը:

Հաջորդ տարի Լիտվայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը կմասնակցեն նաեւ Վրաստանի, Իտալիայի, Լատվիայի, Ուկրաինայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Բուլղարիայի եւ Լեհաստանի հավաքականները:

*ԸՄԲՇԱՄԱՐՏ*

# Լոպեսն անհաղթահարելի պատնեշ է Պատրիկեեւի համար

**Մոսկվայում ընթացող ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանին 2-րդ մեդալը պարգեւեց գերծանրքաշային Յուրի Պատրիկեեւը՝ դառնալով արծաթե մրցանակակիր: Նախնական փուլերում ռուսաստանցի մարզիկը, որ վերջին տարիներին հաջողությամբ է հանդես գալիս Հայաստանի դրոշի ներքո, հաջորդաբար պայքարից դուրս մղեց հնդիկ ըմբիշ Դարմենդեր Դալալին, թուրք Ռիզա Կայալփին, շվեդ Մագնուս Էուրենին եւ ամերիկացի Ջեֆրոն Բյեռսին: Եզրափակիչում Պատրիկեեւը հանդիպեց իր հիմնական մրցակից, կուբացի Միջայն Լոպեսի հետ: Դա մրցակիցների 3-րդ գոտեմարտն էր: Օլիմպիական խաղերում եւ աշխարհի առաջնությունում հաղթել էր Լոպեսը: Պատմությունը կրկնվեց: Այս անգամ էլ Պատրիկեեւին չհաջողվեց ռեւանշի հասնել օլիմպիական խաղերի չեմպիոն, աշխարհի եռակի չեմպիոն Լոպեսի նկատմամբ՝ զիջելով 0-4 հաշվով:**

**Յուրի Պատրիկեեւը Հայաստանին 2-րդ մեդալը պարգեւեց: 31-ամյա ըմբիշն աշխարհի առաջնություններում իր ամենամեծ հաջողությանը հասավ՝ դառնալով 2-րդ մրցանակակիր: Մինչ այդ նա 2 անգամ բրոնզե մեդալ էր նվաճել 2002-ին Մոսկվայում եւ 2007-ին Բաքվում անցկացված աշխարհի առաջնություններում: Ընդ որում Բաքվում Պատրիկեեւն արդեն ներկայացնում էր Հայաստանը: Մեր հավաքականի կազմում նա 2 անգամ՝ 2008-ին եւ 2009-ին դարձել է Եվրոպայի չեմպիոն, 2008-ին Պեկինում արժանացել է օլիմպիական բրոնզե մեդալի: Մինչ այդ էլ 2002-ին նա Եվրոպայի չեմպիոն էր հռչակվել Ռուսաստանի դրոշի ներքո:**

**Անհաջող հանդես եկան Վահան Ջուհարյանն (60 կգ) ու Դենիս Ֆորովը (84 կգ), որոնք պայքարից դուրս մնացին առաջին գոտեմարտից հետո: Ջուհարյանը պարտվեց ուկրաինացի Լենուր Թեմիրովին (0-3), իսկ Ֆորովը զիջեց վրացի Վլադիմիր Գեգելիձեին:**



**Մինչեւ 60 կգ քաշային կարգում Իսպանիան ներկայացնող Ալբերտ Բաշումյան-Ազնազարյանը պարտվեց ճապոնացի Ռյուտարո Մացումոտոյին (0-4): Վերջինս քանի որ մտել էր եզրափակիչ, որտեղ պարտվեց ադրբեջանցի Հասան Ալիեւին, ուստի հայ ըմբիշն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Սակայն առաջին իսկ գոտեմարտում պարտվելով Լենուր Թեմիրովին (0-6), Ալբերտը դուրս մնաց մեդալի համար մղվող պայքարից:**

# Գերմանացիները ջախջախեցին ադրբեջանցիներին

**Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 2-րդ տուրի հանդիպումները ի հայտ բերեցին խմբերի առաջատարներին:**

**A խմբում 6-ական միավորով աղյուսակը գլխավորում են Գերմանիայի եւ Թուրքիայի հավաքականները: Գերմանացիները սեփական հարկի տակ 6-1 հաշվով ջախջախեցին ադրբեջանցիներին: 2 գոլ խփեց Միրոսլավ Կլոզեն: Թուրքերն էլ դժվարին պայքարում 3-2 հաշվով առավելության հասան բելգիացիների նկատմամբ: Առաջին խաղն անցկացրին ավստրիացիները՝ 2 անպատասխան գնդակ ուղարկելով Ղազախստանի հավաքականի դարպասը:**

**B խմբի առաջատարի դերը ստանձնեցին Սլովակիայի եւ Իռլանդիայի հավաքականները: Սլովակները Մոսկվայում Ստոխի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեցին ռուսներին, իսկ իռլանդացիները 3-1 հաշվով պարտության մատնեցին խմբի հետնապահ Անդորրայի ընտրանուն: Գոլերից մեկն իր օգտին գրանցեց իռլանդացիների ավագ Ռոբի Քինը:**



**C խմբում 2-րդ հաղթանակը տոնեցին իտալացիները՝ 5-0 հաշվով ջախջախելով Ֆարերներին: Սերբիա-Սլովենիա հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Սերբերը 4 միավորով 2-րդ տեղում են:**

**Առաջին տուրի անհաջողությունից հետո Ֆրանսիայի հավաքականը շտկեց դրությունը՝ հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթելով բոսնիացիներին: Անսովոր է D խմբի առաջատարի դերում տեսնել Ալբանիայի հավաքականին, որը սեփական հարկի տակ հաղթեց Լյուքսեմբուրգի հավաքականին (1-0): 4 միավոր են վաստակել նաեւ բելառուսները, որոնք հյուրընկալվելիս ֆրանսիացիներին հաղթելուց հետո սեփական հարկի տակ ոչ-ոքի (0-0) ավարտեցին հանդիպումը ռումինացիների հետ:**

**E խմբում շվեդներն ու հոլանդացիները 2-րդ հաղթանակները տարան: Շվեդները տարան տուրի ամենախոշոր հաշվով հաղթանակը՝ 6 անպատասխան գնդակ ուղարկելով Սան Մարինոյի հավաքականի դարպասը: Իսկ հոլանդացիները դժվարությամբ հաղթեցին ֆինններին (2-1): Նույնպիսի հաշվով հունգարացիներն առավելության հասան մոլդովացիների նկատմամբ:**

**F խմբի Խորվաթիա-Հունաստան, Վրաստան-Իսրայել հանդիպումներում դարպասները մնացին անառիկ, իսկ լատվիացիները Մալթայում 2 անպատասխան գնդակ խփեցին դաշտի տերերի դարպասը: 4-ական միավորով առաջատարներն են Խորվաթիայի եւ Իսրայելի հավաքականները:**

**G խմբում Անգլիայի հավաքականը 2-րդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով շվեյցարացիներին (3-1): Որոշ չափով անակնկալ է Չեռնոգորիայի հավաքականի հաջող մեկնարկը: Հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթելով բուլղարացիներին, Չեռնոգորիայի ընտրանին եւս 6 միավոր վաստակեց:**

**Անհաջող են մեկնարկել պորտուգալացիները, որոնք առանց իրենց առաջատար Քրիստիանու Ռոնալդուի եւ երկրի ֆեդերացիայի կողմից որակազրկված գլխավոր մարզիչ Կառլուշ Կեյրուշի Նորվեգիայում զիջեցին 0-1 հաշվով: Նորվեգացիները 6 միավորով գլխավորեցին H խմբի աղյուսակը: Դանիացիները մեկնարկեցին Իսլանդիայի հավաքականի նկատմամբ հաղթանակով (1-0):**

**I խմբում շոտլանդացիներն ու լիտվացիները 4 միավորով առաջատարներն են: Լիտվացի ֆուտբոլիստները 1-0 հաշվով հաղթեցին չեխերին մրցակցի դաշտում, իսկ Շոտլանդիան սեփական հարկի տակ պարտության մատնեց Լիխտենշտեյնին (2-1):**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Անթալիայի լողափերը գրավում են հայերին

Թեպետ վարչապետ Տիգրան Սարգսյանը ներքին կարգով նախարարներին հասկացրել էր, որ հրաժարվեն Անթալիա մեկնելուց, ամառային հանգիստը կազմակերպեն հանրապետության տարածքում եւ այդ կերպ զարգացնեն տեղական տուրիզմը, «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունն էլ «Անթալիայում հանգստացողը զինում է ադրբեջանական բանակը» կարգախոսով պաստառներ էր փակցրել Երեւանի փողոցներում, այնուամենայնիվ, նախորդ տարիների օրինակով այս ամառ էլ տուրիստական գործակալություններում ամենապահանջված վայրը Անթալիան էր: Մի շարք տուրիստական գործակալություններ, որ նախորդ տարի հայրենասիրությունից դրդված հրաժարվել էին տուրեր կազմակերպել դեպի Անթալիա ու միացել բոյկոտին, զգացին, որ ահագին գումար եւ հաճախորդ են կորցնում եւ այս ամառ կրկին հիշեցին Անթալիան:

J&A տուրիստական գործակալությունը 2009-ին հրաժարվեց Անթալիայում տուրեր կազմակերպելուց: «Կարծում էինք, որ դա մեզ օգուտ կբերի, եթե այլ երկրներ առաջարկենք կկարողանանք հակակշռել Անթալիային, սակայն հակառակը ստացվեց: Մեր մշտական հաճախորդների մոտ 60 տոկոսն այդ տարի գործակալության առաջարկներից չօգտվեց: Հիմնականում մեկնում էին Քոբուլեթի կամ Բաթում, Բուլղարիա եւ Կիպրոս մեկնողներ չունեցանք եւ աշխատեցինք վնասով», ներկայացնում է գործակալության տուրմենեջեր **Արմեն Գրիգորյանը**: 2009-ի դառը փորձից հետո նրա խորհրդով այս տարի կրկին դռները բացվեցին Անթալիայի առջեւ: Գործակալությունն այս տարվա արդյունքներից չափազանց գոհ է: «Հարցնողները, հետաքրքրվողները շատ են: Այս տարի մոտ 45-50 հոգի մեկնել են Անթալիա: Ինչ վերաբերում է գներին ապա դրանք տարբեր են՝ սկսած 1300-ից մինչեւ 15.000 դոլար», ասաց Արմեն Գրիգորյանը: Նրա ներկայացրած տվյալների համաձայն՝ հայերը հիմնականում նախընտրում են միջին գնի՝ 4000-7000 դոլար կազմող փաթեթը: 15.000 դոլարանոց փաթեթից օգտվել են մի շարք պատգամավորներ ու հայտնի քաղաքական գործիչներ: «Չեմ կարող ասել, էդ մարդիկ մյուս տարի էլ են մեր գործակալությունից օգտվելու: Կլինեն կորցնելու խնդիր կա», եզրափակեց նա:

Անթալիա մեկնելը դարձել է նաեւ նորաձեւություն, քաղքենու մակարդակով էլիտար երեւալու անհագ ցանկություն:

35-ամյա **Կարենն** ու 27-ամյա **Արփինեն** հարսանեկան ճամփորդությունն անցկացրել են Անթալիայում: «Կյանքիս 2 հրաշալի շաբաթներն էին», հանգիստն է ներկայացնում Արփինեն ու հավելում, որ ամուսնու հետ մտադրվել են ամեն տարի մեկնել Անթալիա: «Շատ սիրեցինք այդ երկիրը», ասում է նա: Պարզաբանումից հետո, որ Անթալիան Թուրքիայում է գտնվում, Արփինեն ճշտեց. «Անթալիան սիրեցինք, ոչ թե Թուրքիան»:

Երկշաբաթյա հանգստի համար նորապսակները ծախսել են մոտ 5.000 դոլար: Թե ինչու այդ նույն գումարով Հայաստանում չեն կազմակերպել իրենց հանգիստը՝ նորապսակները մատնանշում են երկրի բնակլիմայական ոչ նպաստավոր պայմանները, ականջ ծակող երաժշտությունն ու Սեւանի սառը ջուրը:

«Բացի այդ՝ ինչո՞ւ պետք է հետ մնանք ուրիշներից: Ես էդ գումարը վաստակել եմ ու որտեղ ուզենամ՝ էնտեղ էլ կծախսեմ: Մեր հանգիստը քաղաքականության հետ մի խառնեք», շարունակեց Կարենը:

Որ նախորդ տարիների օրինակով այս տարի էլ Անթալիան պահանջված էր՝ ապացուցվեց մի շարք տուրիստական գործակալություններ կատարած այցելությամբ:

«Էնջլ» տուրիստական գործակալությունում թռիչքների հիմնական ուղղությունն Անթալիան էր: «Այս տարի ունեցել ենք ավելի քան 60 պատվիրատու, որոնք հանգստացել են Անթալիայում: Մեր գործակալությունում գները սկսվում են 400 դոլարից եւ հասնում 15000 դոլարի», ասաց գործակալության ներկայացուցիչ **Սեւակ Շիրինյանը**:

«Էյս» գործակալությունում էլ էր ամենապահանջվածը Անթալիան: «Գործակալությունը նորաբաց է, դրա համար շատ պատվիրատու չենք ունեցել: Անթալիա մեկնելու մոտ 25 պատվեր ենք կատարել», ասացին գործակալության աշխատակիցները:

«Տրիումֆ» գործակալությունում էլ Անթալիա մեկնելու տուրեր կազմակերպում են, սակայն դրան հակակշռելու համար հաճախորդին առաջարկում են նաեւ Բուլղարիայի եւ Կիպրոսի հանգստավայրերը: Բայց դա էլ չի օգնում. եթե Բուլղարիա կամ Կիպրոս մեկնողների թիվը չի գերազանցում 2 տասնյակը, ապա Անթալիայում հանգստացողների թիվը հասնում է 50-ի:

«Այստեղ մեր բիզնեսի հարցն է դրված: Եթե հրաժարվենք Անթալիայից, ապա կունենանք ֆինանսական լուրջ կորուստներ: Եթե մարդիկ ցանկանում են հանգստանալ Անթալիայում, ապա մենք ստիպված ենք կազմակերպել տուր դեպի Անթալիա: Եթե վաղը այսքան մարդ ցանկանա գնալ Չիլի, ապա կկազմակերպենք տուր դեպի Չիլի», ասաց «Տաթեւ» գործակալության տուրմենեջեր Արթուր Բաբայանը: Գործակալությունն արդեն մի քանի տարի հիմնականում տուրեր է կազմակերպում Անթալիա եւ արդյունքներից դժգոհ չէ: Այս տարի գործակալության միջոցով Անթալիա են մեկնել ավելի քան 80 հայ զբոսաշրջիկներ:

«Գոլուբտուր» գործակալությունում էլ Անթալիայի եւ Եգիպտոսի գները սկսում են 200.000 դրամից, բայց «անթալիամանիան» շարունակվել է անգամ այստեղ: «Հունիս ամսին մի նորապսակ զույգ չէր կողմնորոշվում՝ մեկնել Եգիպտո՞ս, թե՞ Անթալիա: Տուրմենեջերն ասաց, որ հունիսը Եգիպտոսում հանգստանալու լավագույն ամիսն է, սակայն զույգն ընտրեց Անթալիան», պատմեցին գործակալությունում:

Միայն Երեւան քաղաքում գործում են ավելի քան 100 տուրիստական գործակալություններ, նրանց մի քանիսն է, որ դեպի Անթալիա թռիչքներ չի կազմակերպում: Այս տարի ճգնաժամի հետեւանքով Հունաստանն ու Իսպանիան չափազանց մատչելի գներով իրենց հանգստավայրերն էին առաջարկում զբոսաշրջիկներին, բայց հայկական մտածելակերպն Անթալիայի սահմաններից այն կողմ չձգտեց: Հայկական տուրիզմը բավարար չէ, վրացական ափերը՝ նույնպես, հունական կամ իսպանական լողափերի համար մակարդակը դեռ չի բարձրացել: Հետեւաբար նորաձեւ եւ հարուստ երեւալու ամենակարճ ուղին Անթալիան է:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՆՔՈՐԱՆ

## Թալիշները ոտքի՞ են կանգնում

**Ադրբեջանի հարավային շրջաններում վերջին օրերին իրավիճակը կտրուկ սրվել է: «Լենքորանում ոչ պաշտոնական արտակարգ դրություն է տիրում», գրում է ադրբեջանական Poligon ինտերնետ- պարբերականը:**

**Ավելի վաղ ծանուցվել էր, որ այդ շրջանի տարածքում հայտնվել են «ծայրահեղ հավատացյալներ, որոնք տեղի հոգեւոր սպասավորներին մեղադրում են իսլամը չհարգելու, արարողությունները ոչ ճիշտ անցկացնելու մեջ»: Այդ հողի վրա արձանագրվել են ծեծկռտուքի փաստեր: Իսկ Մասալլիի շրջանում դիմակայության հետեւանքով կա սպանված: Հանցագործություն կատարելու մեղադրանք է առաջադրվել Լենքորան քաղաքի մի քանի բնակչի, որոնք ձերբակալված են: Նախօրեին ձերբակալվածների հարազատները եւ մտերիմները, շուրջ 200 մարդ, քաղաքի կենտրոնական հատվածում բողոքի ցույց են կազմակերպել, որը դաժանորեն ցրվել է: Հատուկ ջոկատայինները ցուցարարների դեմ արցունքաբեր գազ են օգտագործել, ապա ծեծել: Չորս տասնյակ մարդ ձերբակալվել է, այդ թվում՝ մի հոգեւորական:**

**Այդ դեպքից հետո է, որ Լենքորանում արտակարգ իրավիճակ է հաստատվել: Քաղաքի ելումուտքը վերահսկվում է ոստիկանության ուժեղացված կարգախմբերի միջոցով:**

**Poligon-ի վերլուծաբանի հայացքով, այդ իրադարձությունների թիկունքում կանգնած է Իրանը: Դա բացատրվում է նրանով, որ «Ադրբեջանը չափազանց մեծ հույսեր է կապել Ղարաբաղի հարցում Ռուսաստանից ստանալիք աջակցության հետ: Այժմ, երբ այդ հույսերը չեն արդարանում, Ադրբեջանը մտադիր է վերափոխել արտաքին քաղաքականության վեկտորը եւ օժանդակություն փնտրել Արեւմուտքում: Իսկ Ադրբեջանում արեւմտյան ազդեցության ուժեղացումը սպառնալիք է Իրանի համար»: Ահա թե ինչու, ըստ վերլուծաբանի, Իրանը «որոշել է կանխարգելիչ քայլեր ձեռնարկել»:**

**Նույն աղբյուրը նաեւ ակնարկում է, որ զուգահեռաբար աշխուժացել է նաեւ Ռուսաստանում բնակվող «թալիշական անջատողականությունը»: Փաստեր կամ անուններ առայժմ չեն նշվում:**

**Փոխարենը ինտերնետ- պարբերականը, հղում անելով «լավատեղյակ աղբյուրներին», գրում է, որ ընթացիկ շաբաթասկզբից Ադրբեջանը միակողմանիորեն խստացրել է Իրանի հետ անցուղարձը: Մասնավորապես, Աստարայի մաքսակետում, որտեղից մինչ Լենքորանի դեպքերը օրական շուրջ 2000 մարդ մուտք էր գործում Ադրբեջան, ներկայումս սահմանվել է ոչ ավելի, քան օրական 150- 200 մարդու մուտքի քվոտա:**

**Այդ պատճառով առաջանում են կուտակումներ: Մարդիկ օրերով չեն կարողանում անցնել մաքսակետը եւ ստիպված գիշերում են բաց երկնքի տակ, քանի որ նման դեպքերի համար անհրաժեշտ կառույցներ չկան:**

**Ուշագրավն այն է, որ սահմանափակումը տարածվում է ոչ միայն Իրանի, այլեւ Ադրբեջանի քաղաքացիների վրա, որոնք Իրանից վերադառնում են հայրենիք կամ ուզում են մեկնել հարեւան երկիր:**

**Ինչպես հայտնի է, Իրանը միակողմանիորեն վերացրել է Ադրբեջանի հետ վիզային ռեժիմը, մինչդեռ պաշտոնական Բաքուն «տեխնիկական բնույթի պատճառաբանություններով» չի շտապում արձագանքել իրանական կողմի նախաձեռնողականությանը:**

**Ադրբեջանի հարավային շրջանների բնակչության զգալի մասը էթնիկ թալիշներ են, որոնք լեզվական, մշակութային եւ դավանաբանական սերտ կապեր ունեն Իրանի հետ: 1993 թ. այդ տեղաշրջանում հռչակվել էր Թալիշ-մուղանյան հանրապետություն՝ Ալիքրամ Հումբաթովի գլխավորությամբ: Թալիշների ազգային զարթոնքը բռնաճնշվել է: Շարժման ղեկավարների մի մասը վտարանդվել է, մյուսն առ այսօր դատապարտված է երկարաժամկետ կալանքի:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## Ղազախականին կհաջորդի իռլանդականը՝ Հյուսիսային Իռլանդիայի փորձով

**ԵԱՀԿ ներկայումս գործող նախագահ Ղազախստանը նախագահությունը ստանձնելու պահին իսկ հայտարարեց, թե հակամարտությունների առնչությամբ գործունեությունն առավել ակտիվ է վարելու: Դժվար է ասել, թե ինչ ակտիվություն էր այս խոսքերն ասելիս պատկերացնում Ղազախստանի արտաքին գործերի նախարար Կանատ Սաուդաբաեւը, բայց որ ակտիվություն նկատվեց, այն էլ բացասական իմաստով՝ ակնհայտ է: Մասնավորապես վերջին շրջանում բավականին ակտիվորեն ադրբեջանական կողմը խախտում է զինադադարի ռեժիմը, որի հետեւանքով կան զոհեր:**

**Ինչեւէ, հերթական անգամ ԵԱՀԿ նախագահությունը կփոխվի, եւ այն այս անգամ կստանձնի Իռլանդիան: 2012թ.-ին ԵԱՀԿ-ում նախագահության ընթացքում Իռլանդիան «ակտիվորեն կաշխատի հակամարտությունների կարգավորման ուղղությամբ»: Այս մասին Վիեննայում հայտարարել է Իռլանդիայի արտգործնախարարության ղեկավար Միխել Մարտինը: Ըստ նրա՝ ԵԱՀԿ-ն կարեւոր դերակատարություն ունի հակամարտությունների կարգավորման գործում: «Հենվելով Հյուսիսային Իռլանդիայի խաղաղ գործընթացի մեր փորձի վրա՝ մենք լարված կաշխատենք հակամարտությունների կարգավորման ուղղությամբ», ասել է Մարտինը:**

Ա. Հ.

## «Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է բարձրագույն որակավորման դասընթացների ընդունելություն

«Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է «Լրատվության եւ մեդիա ոլորտի այլ մասնագիտություններով աշխատողների բարձրագույն որակավորման դասընթացների» ընդունելություն:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից:

Ընդունելությունն անցկացվում է հետեւյալ մասնագիտություններով.

Լրագրություն, այդ թվում տպագիր մամուլի, հեռուստա -, ռադիո- եւ on-line

1. լրագրող
2. խմբագիր
3. թարգմանիչ
4. հեռուստաօպերատոր եւ մոնտաժող
5. Հեռուստահաղորդավար
6. Գովազդային մենեջեր եւ PR
7. Մեդիա մենեջեր

Ուսուցումը ստացիոնար է, ուսման ժամկետը 6 ամիս: Ուսուցումը վճարովի է:

Դասընթացներն ավարտողները կստանան համապատասխան վկայականներ:

Հասցե. ք. Երեւան, Իսահակյան 28

էլ.փոստ՝ info@nt.am, 777info@.am

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 565965, 524279 հեռախոսահամարներով՝ ժամը 10.00-ից մինչեւ 17.00-ն (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):

# Հայկական բժշկամոգական ձեռագիրը՝ պրոֆ. Ռասելի դասախոսության թեմա

**Խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 16-ին՝ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (ՀՈւՀԱԱ) բելմոնտյան (Մասաչուսեթս) կենտրոնում Հարվարդ համալսարանի «Մաշտոց» մրցանակին արժանացած պրոֆ. Ջեյմս Ռասելը դասախոսություն է կարդալու «Հայկական մի բժշկամոգական ձեռագրի շրջագայությունը» թեմայով: Այդ ձեռագիրը՝ մի անսովոր հուշատետր «Բժշկարան» վերնագրով, հայտնվել է վերջերս ՀՈւՀԱԱ-ին նվիրած հանգուցյալ դոկտ. Լեւոն Զ. Բոյաջյանի գրքերի եւ փաստաթղթերի հավաքածուում, որտեղից պրոֆ. Ռասելը հանել է եւ ուսումնասիրել: Ըստ նրա՝ տեքստի բժշկական հատվածը համեմատաբար նոր է, գրված 1890-1920 թվականներին, իսկ որոշ մոգական տեքստեր՝ գրված դասական հայերենով, հավանաբար արտագրված են ավելի վաղ շրջանի (17-րդ կամ 18-րդ դարերի) ձեռագրերից: Տեքստերից ոմանք (Սողոմոնի մասին պատմողը՝ օրինակ) հայտնի են նաեւ այլ աղբյուրներից: Նա պատահականություն չի տեսնում մի հուշատետրում թ՛ե բժշկական, թ՛ե մոգական տեքստերի տեղադրման մեջ, քանի որ հնում այդ երկուսը գոյություն են ունեցել համարյա իրարից անբաժան: Պրոֆեսորն իր դասախոսության ընթացքում անդրադառնալու է այդ ձեռագրի՝ հին աշխարհից դեպի նորը անսովոր «շրջագայության» մասին:**

**Դասախոսության առիթն օգտագործելով՝ ՀՈւՀԱԱ-ի վարչականներն, ըստ հաղորդագրության, որոշել են հարգանքի տուրք մատուցել ասոցիացիայի երեք հիմնադիր անդամներին՝ Թովմաս Ամիրյանին (վախճանված 1993-ին), Արա Ավագյանին (վախճանված այս տարվա հուլիսին) եւ Մանուկ Յանգին, որոնք 1955-ին, հետեւելով Հարվարդ համալսարանի պրոֆ. Ռիչարդ Ֆրայի հորդորներին, հիմնել են Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը:**

Հ. Ծ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: